ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ. Փ. ՇԱՀԻՆՅԱՆ

«Սխալ ճանապարհի վրա է Լ. Շահինյանը»։ Այսպես է ավարտվում պատմական գիտությունների դոկտոր Գ. Խ. Սարգսյանի հոդվածը[1], որն ուղղված է Խորենացու ժամանակագրության վերականգնման առթիվ մեր բերած հիմնական առաջարկների դեմ։

Առաջին առաջարկով[2], որին ծանոթ է ընթերցողը, անհավանական ենք համարել ճանաչված հայագետ Սեն-Մարտենի, ինչպես նաև նրա հետևորդների տեսակետը՝ Արշակունիների թագավորության սկիզբը ըստ Խորենացու որոշելու հարցում, և ապա համապատասխան փաստերի հիման վրա եզրակացրել ենք. ա) Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ գրքերի ժամանակագրության ելակետը Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթիվն է՝ 323 թ. (մ. թ. ա.) *կամ, մասնակի վերապահությամբ, հաջորդ տարին. բ)* Խորենացին Սելևկյանների թագավորությունը հաշվել է ոչ թե սելևկյան էրայի սկզբնատարուց՝ 312 (311 թ.) մ. թ. ա., այլ Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթվից *կամ, գուցե, հաջորդ տարվանից. գ)* Պարթևների թագավորության սկզբնատարին, ըստ Խորենացու, 263 կամ 262 թվականն է (մ. թ. ա.), *փոխարեն ընդունելի համարված 252, 251 կամ 250-ի (մ. թ. ա.)[3]։*

Գ. Սարգսյանը, մի տեսակ անբավական մեր գործից, քանի որ հանդգնել ենք անհավանական համարել Սեն-Մարտենի, ինչպես ինքն էլ է ասում, հայագիտության մեջ ընդունելի դարձած տեսակետը (էջ 135), հանգամանորեն բացատրում է այդ տեսակետի էությունը, դրա հավանականության օգտին փաստեր է վկայակոչում (էջ 135—138) և հարց ու պատասխանի ձևով եզրակացնում է. «Իսկ ի՞նչ է հակադրել Շահինյանը այս բոլորին։ Ոչինչ։ Նա պարզապես լռության է մատնել սելևկյան էրայի սկզբնատարին Ալեքսանդր Մակեդոնացու անվամբ կոչվելու երևույթն իսկ, հույսը դնելով ընթերցողի անտեղ-

---

1 Գ. Խ. Սարգսյան, Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի վերականգնման մասին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 119—146)։ Այսուհետև Գ. Սարգսյանի հոդվածի համապատասխան էջերը նշելու ենք տողամիջում, տողատակերը չծանրաբեռնելու նպատակով։

2 Գ. Սարգսյանի մոտ մեր առաջարկները ետուառաջ են ներկայացված։ Առաջին հարցը կամ առաջին առաջարկը նրա հոդվածում դարձել է երրորդ, իսկ երրորդը՝ առաջին, որովհետև այդպես նպատակահարմար է թվացել։ Սույն մոտեցումը թերևս հնարավոր լիներ անուշադրության տալ, եթե մեր քննարկած հարցերի հաջորդականությունը պայմանավորված չլիներ Խորենացու ժամանակագրական տեղեկությունների անխախտելի հաջորդականությամբ։ Այնպես որ դա սոսկ ձևական բնույթ չի կրում՝ ենթակա ուսումնասիրողի քմայքին, այլ Խորենացու երկից բխող պարտադիր պահանջ է։

3 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 155—172։

յակության վրա՝ ամբողջությամբ շրջանցել է իր տեսակետը եղծանող այս հանգամանքը և իր ջանքերն ուղղել դեպի մանր-մունր խոչընդոտների հաղթահարումը» (էջ 138)։

Այստեղ իսկ նշենք, որ «մանր-մունր խոչընդոտներ» ասելով Գ. Սարգսյանը նկատի է ունեցել Մ. Էմինի և Ք. Պատկանյանի փաստարկումները[4], որոնք մինչև վերջերս բոլորովին էլ «մանր-մունր» չէին։ Սակայն սա չէ կարևորը։ Ներկա պահին կարևորն այն է, որ մանր թե մունր, Խորենացու համապատասխան տեղեկությունները սելևկյան էրայով բացատրելու երկու փորձ կարող ենք հաղթահարված համարել։ Այնուհետև, անդրադառնալով Սեն-Մարտենի կարծիքին, Գ. Սարգսյանը գրում է. «Շահինյանը չի հերքել իր կողմից վիճարկվող տեսակետի հիմնական փաստարկը, այլ շրջանցել է այն, ցուցաբերելով գիտական անբարեխղճություն» (էջ 139)։

Սույն մեղադրանքը պայմանավորված է այն բանով, որ մենք Գ. Սարգսյանի ցանկացած ձևով չենք ներկայացրել Սեն-Մարտենի տեսակետը և, ինչպես ասում է, չենք հերքել մեր տեսակետը «եղծանող» բուն հանգամանքը, որի հետ նա այդքան մեծ սպասելիքներ է կապել։ Ահա թե ինչու, հետագա մեղադրանքներից ու հնարավոր վնասներից խուսափելու նպատակով, որոշեցինք Սեն-Մարտենին ներկայացնել այնպես, ինչպես Սարգսյանի մոտ է։

«Խորենացին,— ասել է նա (Սեն-Մարտենը),— «արևելցիների մեծամասնության նման սկսել է սելևկյան էրան Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետից»։ Այս միտքը,— բացատրում է Գ. Սարգսյանը,— նա պարզաբանել է հետևյալ խոսքերով. «Հաստատ է, որ մինչև օրերը ասորիները տալիս են Ալեքսանդրի անունը այն էրային, որի սկիզբն է Քրիստոսից առաջ 311 թվականի հոկտեմբեր ամիսը»[5] (էջ 136)։

Ի հավելումն Սեն-Մարտենի այս մտքերի, որոնց ընդգծումն անհրաժեշտ համարեցինք, Գ. Սարգսյանը անմիջապես շարունակում է. «Բացենք ժամանակագրության խնդիրներին նվիրված ցանկացած ձեռնարկը և ամենուրեք սելևկյան էրային նվիրված բաժնում տեղեկություն կգտնենք այն մասին, որ սելևկյան էրան տարբեր անվանումներ է ունեցել, օրինակ, «Հունաց թվական», և որ, հիրավի, հենց Խորենացու ժամանակաշրջանում, նրանից առաջ և նրանից հետո էլ Արևելքում՝ ասորիների, պարսիկների, արաբների ու այլ ժողովուրդների մոտ այդ էրայի ամենատարածված անվանումներից մեկը կապված է եղել Ալեքսանդր Մակեդոնացու (Իսքանդարի, Երկեղջյուրի) անվան հետ։ Եվ այդ՝ հակառակ այն իրողության, որ Ալեքսանդրը մահացել է 312/311 թ. 12 տարի առաջ» (էջ 136)։

Կարդում ենք Սեն-Մարտենի արդեն պարզաբանված մտքերը նորից պարզաբանող վերոհիշյալ տողերը, ծանոթանում ենք դրանց հիմնավորմանը ծառայող փաստերին և ակամա հարցնում՝ ինչի՞ համար է այդ բոլորը։ Ո՞վ է վիճարկել, թե սելևկյան էրան այլ անվանումներ չի ունեցել կամ Ալեքսանդրի անունով չի կոչվել։

---

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 157—159։

[5] Մ. թ. ա. 311 թ. հոկտեմբեր ամիսը՝ իբրև սելևկյան էրայի սկզբնակետ, այստեղ, թերևս, վրիպակ է, քանի որ ինքը՝ Սարգսյանը, մեկ այլ առիթով ճիշտ նկատել է, որ «սելևկյան տոմարի ելակետն է մ. թ. ա. 312 թ. դիոս (հոկտեմբեր) ամիսը...» (տե՛ս Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 15, ծանոթ. 8)։

Սակայն ի՞նչ կապ կա այս բոլորի և Խորենացու մեղ ծանոթ տեղեկությունների միջև։ Եվ ինչո՞ւ միայն Խորենացու։ Ի՞նչ կապ կա դրանց և Անանունի կամ Խորենացու միջնադարյան հետևորդների տեղեկությունների միջև։ Մեր համոզումով՝ որևէ կապ չկա և լինել չի էլ կարող։ Դրանց միջև կապ է ստեղծվում այն բանից հետո, երբ անառարկելի ենք համարում Սեն-Մարտենի ենթադրությունը, թե՝ «Խորենացին արևելցիների մեծամասնության նման սկսել է սելևկյան էրան Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետից», և ընթանում ենք այդ ենթադրության հետքերով։

Իրականում Սեն-Մարտենի այս ենթադրությունը առարկելի է ամենատարբեր առումներով։

Առաջին, Խորենացու մոտ ոչ միայն որևէ տեղեկություն, այլ անգամ հեռավոր ակնարկ չկա սելևկյան էրայի մասին։ Ճիշտ է, պարսից Արշակունիների թագավորության սկզբնատարին ցույց տալու համար Խորենացին հաշվումներ է կատարել նաև սելևկյան արքաների գահատարիներով, սակայն սա չի նշանակում, թե նա սելևկյան էրան է նկատի ունեցել։ Ինչպես նշել ենք մեր հոդվածում, հենց դրա հակառակն է Խորենացու մոտ։ Սելևկյանների թագավորությունը նա հաշվել է, ոչ թե սելևկյան էրայի սկզբնատարուց (312 կամ 311 թ. մ. թ. ա.), այլ Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթվից (323 թ. մ. թ. ա.), ուստի և նրա խոսքը սելևկյան էրայի մասին չէ։ Այս բանի պերճախոս ապացույցն է, ինչպես քանիցս վկայակոչվել է, Խորենացու «որպէս ասացաք» ցուցումը և դրան հաջորդող բացատրությունը, թե «յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ պարթևաց Արշակ Քաջ...»։

Այսուհանդերձ, Գ. Սարգսյանը, հանդես գալով Սեն-Մարտենի տեսակետի պաշտպանության դիրքերից, մի այսպիսի միտք է շարադրել. «Ասածս ամենևին չի նշանակում,— գրում է նա,— թե հնարավոր չէր կամ Խորենացին չէր կարող հաշվել ժամանակը Ալեքսանդրի մահվան բուն տարեթվից, այլ միայն այն, որ նա այդպես չի հաշվել իրականում» (էջ 138)։

Մենք չգիտենք, Խորենացու տեղեկություններին ծանոթ ո՞ր ընթերցողին կհամոզի Գ. Սարգսյանի սույն հայտարարությունը, ո՞վ կհավատա, թե Խորենացին իր ժամանակագրական հաշիվը չի սկսել Ալեքսանդրի մահվան բուն տարեթվից, երբ նրա մոտ չափազանց հստակ սևով սպիտակի վրա գրած է. «յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ պարթևաց Արշակ Քաջ...»։

Ի դեպ, Գ. Սարգսյանը տվյալ դեպքում նոր բան չի ասել։ Նա պարզապես փորձել է հովանավորվել Սեն-Մարտենի՝ դեռևս ապացույցների կարոտ այն կարծիքով, որ, իբր թե, Խորենացին՝ Ալեքսանդրի (Մակեդոնացու) մահը նշելով, նրա մահվան ենթադրյալ ժամանակն է նկատի ունեցել։ Ավելի պարզ ասած, ինչպես երևում է, Սեն-Մարտենի ու իր տեսակետն ընդունողների (Հ. Տաշյանի, Գ. Սարգսյանի և այլոց) համապատասխան բացատրություններից, Խորենացին՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահը նշելով, ալեքսանդրյան թվականությունն է նկատի ունեցել, որի սկիզբը դրվում է նրա մահվան բուն թվականից 12 տարի հետո։ Ահա սա էլ Սեն-Մարտենի քննարկվող ենթադրության երկրորդ խիստ առարկելի հանգամանքն է, որը ոչ այլ ինչ, քան Խորենացու վկայությունների մոտացածին մեկնաբանություններից։ Եվ, իրոք, Խորենացու ո՞ր տեղեկության հիման վրա Սեն-Մարտենը կամ իր տեսակետի պաշտպանները կարող են կարծիք հայտնել, թե նա Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետը կամ

ալեքսանդրյան թվականն է նկատի ունեցել։ Մեր համոզումով՝ ոչ մի, որովհետև Խորենացու մոտ որոշակի նշված է Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը *(բնական է, որ խոսքը մահվան բուն թվականի մասին է, քանզի մահվան ուրիշ թվական լինել չի կարող)* և ոչ թե ալեքսանդրյան կոչված թվականը։

Այսպիսով, Սեն-Մարտենի տեսակետն իմաստավորող բուն ենթադրության երկու բաղադրիչներն էլ հավասարապես անհամոզիչ են, քանի որ չեն բխում Խորենացու տեղեկություններից։

Նման պարագաներում հարկ կա՞ ասելու, որ ինչպես Սեն-Մարտենի խոսքը՝ սելևկյան ու ալեքսանդրյան (կամ Ալեքսանդրի անունով կոչված) թվականների նույնության մասին, այնպես էլ նրա տեսակետը պաշտպանողների բերած փաստերն այս առթիվ (նկատի ունենք հատկապես Հ. Տաշյանին և Գ. Սարգսյանին) Խորենացու ժամանակագրության համար դառնում են ավելորդ աշխատանք։ Ավելորդ, որովհետև նախքան այդ բնույթի փաստերի վկայակոչումը պետք է հիմնավորապես ապացուցվի, որ իրոք Խորենացին սելևկյան էրան է նկատի ունեցել, որ նրա նշած «...յետ ...մահուանն Ալեքսանդրի...» միտքը Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետ կամ ալեքսանդրյան թվական է նշանակում։

Այս է փաստորեն Գ. Սարգսյանի ճանաչած Սեն-Մարտենի տեսակետի էությունը, որը նա հակադրել է մեզ և համարել է անառարկելի ճշմարտություն։ Այս է, վերջապես, Գ. Սարգսյանի այն անխոցելի պատվարը, որի դեմ, նրա կարծիքով, մեր բերած փաստերը «ոչինչ» են և «ոչ մի քայլ չեն մոտեցրել մեր դրույթի հաստատմանը» (էջ 139)։

Թե ի՞նչ փաստեր էինք բերել մեր դրույթի հաստատման համար, ընթերցողը ծանոթ է, և այստեղ երկրորդելու անհրաժեշտություն չկա։ Բավական ենք համարում վերհիշել թեկուզ վկայակոչված հեղինակների անունները՝ Մովսես Խորենացի, Անանուն, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ասողիկ, Մխիթար Անեցի, Վարդան Բարձրաբերդցի և ուրիշներ։

Եթե մենք վերոհիշյալ բոլոր հեղինակների տեղեկությունները հասկացել ենք իրենց ուղղակի նշանակությամբ, առանց զարտուղի մեկնաբանությունների, այսինքն այնպես, ինչպես շարադրված է նրանց մոտ, Գ. Սարգսյանը դրանք նույնպես ենթարկել է Սեն-Մարտենի մեզ արդեն ծանոթ ենթադրության «ամենազոր» ուժին։ Նրա կարծիքով (ի դեպ, սա Հ. Տաշյանի կարծիքն է, որին ըստ ամենայնի հետևել է Գ. Սարգսյանը) Խորենացին չէ միայն, որ Ալեքսանդրի մահը նշելով, նկատի է ունեցել ալեքսանդրյան թվականություն, այլ մնացած բոլորը՝ թե՛ Անանունը և թե՛ Խորենացու միջնադարյան հետևորդները։ Այս էլ այն պատճառով, որ Անանունից զատ մնացած բոլորը ընդօրինակել են Խորենացուն։ Իսկ Անանունը... Սա էլ, Սարգսյանի պնդումով (էջ 139), Սեն-Մարտենի, Հ. Տաշյանի և իր հասկացած Խորենացու նման է վարվել... Եվ այսպես, «չեզոքացնելով» մեր դրույթը հաստատող փաստերի արժեքն ու թվարկելով վկայակոչված հեղինակների անունները, Գ. Սարգսյանը հարցնում է. «Բայց չէ՞ որ եթե ութի փոխարեն լիներ ութսուն կամ ութ հարյուր օրինակ, զարձյալ դրանից Խորենացու հաղորդածի և թված հեղինակների ընդօրինակածի իմաստը, բովանդակությունը չէր փոխվի, իսկ մենք տեսանք, թե որն է դրա բուն իմաստն ու բովանդակությունը» (էջ 138)։

Սարգսյանի սույն հատվածի առաջին միտքը՝ մինչև «իսկ» շաղկապը, ապակողմնորոշող նշանակություն ունի։ Այնպես է ստացվում, թե մենք ասել

ենք, որ Խորենացուն ընդօրինակող հեղինակների տեղեկությունները փոխում են նրա հաղորդածի իմաստը։ Եթե Գ. Սարգսյանը մի փոքր լուրջ ուշադրություն դարձներ և չցանկանար տպավորություն ստեղծել, անպայման կնկատեր, որ մեր հոդվածում, մասնավորապես վերջին 12 էջերում (160—172), հենց դրա հակառակն ենք ասել՝ որ Խորենացուն ընդօրինակող հեղինակների մեծագույն մասը, բացի Մովսես Կաղանկատվացուց, Սամվել Անեցուց և Ներսես Պալիենցից, Սելևկյանների և Արշակունիների ժամանակագրության հարցերում հետևել են միմիայն Խորենացուն, որ այդ հարցերում փորձել են տարբերվել և իրոք տարբերվում են Եվսեբիոս Կեսարացուց (հատկապես ակնբախ է Աստղիկի օրինակը), որ, ի վերջո, եթե ութի փոխարեն ութսուն կամ ութ հարյուր օրինակ ունենայինք, Խորենացու հաղորդածի իմաստը, բովանդակությունը ոչ միայն չէր փոխվի, այլ ավելի քան կհաստատվեր։

Մի հարց ևս, որին այժմ չի կարելի ուշադրություն չդարձնել։ Ընթերցողին հայտնելով, որ մենք Սեն-Մարտենին ճիշտ չենք ներկայացրել, Գ. Սարգսյանը այնուհետև շարունակում է. «Իսկ Հակոբ Տաշյանի տեսակետը, որ շարադրված է նրա աշխատության 10 մեծադիր կամ 33 փոքր էջերի վրա, նույնիսկ վերոհիշյալ ձևով էլ հանդես չի եկել Շահինյանի հոդվածներում։ Մենք այնտեղից միայն իմանում ենք, որ Տաշյանը այս հարցում «խիստ քննադատության, անդամ՝ հեգնանքի» է ենթարկել Գարագաշյանին և Խալաթյանին, և այդ կապակցությամբ է միայն, որ տողատակում վկայակոչված է Տաշյանի աշխատությունը» (էջ 138)։

Բրավացի է Սարգսյանը, Հ. Տաշյանի ուսումնասիրության մասին մեր հոդվածներում քիչ է ասված[6]։ Եվ քանի որ առիթ է ստեղծվել, փորձենք ընթերցողին ներկայացնել այդ ուսումնասիրության էությունը, որով և բացատրած կլիներ մեր վերաբերմունքը։

Այստեղ իսկ հայտնենք, որ, կամա թե ակամա, նորից առնչվելու ենք Սեն-Մարտենին, որովհետև Հ. Տաշյանը փորձել է պաշտպանել Սեն-Մարտենի տեսակետը (ուրեմն քննարկվող հարցի վերաբերյալ նոր տեսակետ չունի) և իր ամբողջ ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել է նրա՝ մեղ ծանոթ ենթադրությունով։ Ավելին, Հ. Տաշյանը նույնպես, ինչպես Գ. Սարգսյանը, անվերապահորեն ընդունելով Սեն-Մարտենի ենթադրությունը, ավելի է ընդարձակել դրա ազդեցության ոլորտները։ Այսպես, նրա ուսումնասիրությունից երևում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ կապված ժամանակագրական բոլոր տեղեկությունները՝ նշված կլինի Ալեքսանդրի մահը, նրա թագավորության սկիզբը, Դարեհ III-ի դեմ տարած հաղթանակի տարին, ալեքսանդրյան թվական կամ մի այլ բան, միևնույն է, պետք է սկսել 312 կամ 311 թ. (մ. թ. ա.), որովհետև դրանք, ըստ Տաշյանի, հասկացվելու են, այսպես ասած, այլաբանորեն, այսինքն՝ ալեքսանդրյան թվականություն։ Հարկ է նկատել նաև, որ սույն մոտեցումը յուրահատուկ չէ միայն Տաշյանին. դա համընդհանուր ճանաչում գտած տեսակետ է, պատմագիտական իշխող մտայնություն, որին

6 Ի դեպ, Գ. Սարգսյանը, որն անվերապահորեն ընդունել է Սեն-Մարտենի և Հ. Տաշյանի տեսակետը, Խորենացու ժամանակագրությանը նվիրված իր ծավալուն ուսումնասիրության մեջ ոչ միայն լության է մատնել հակառակ կարծիքները (Մ. Չամչյանի, Ն. Ջնտոյանի, Ա. Գարագաշյանի, Գր. Խալաթյանցի), այլև անհրաժեշտ չի համարել խոստովանել, որ ինքը Սեն-Մարտենի և Հ. Տաշյանի տեսակետի հետևորդն է. ավելին, նա չի նշել անգամ վերջիններիս անուններն ու համապատասխան գործերը։

տուրք են տվել թե՛ Սեն-Մարտենը (ի դեպ, Սեն-Մարտենը զգույշ է վարվել, երբ գրել է, թե խորենացին «արևելցիների մեծամասնության նման սկսել է սելևկյան էրան Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետից», ուրեմն նկատի է ունեցել նաև փոքրամասնություն, որն այդպես չի վարվել), թե՛ Հ. Տաշյանն ու Ն. Սարգսյանը (վերջիններս իրենց գործերում անտեսում են փոքրամասնության գոյությունն իսկ) և թե՛ ուրիշներ։

Ըստ Հ. Տաշյանի. «...երբ կհանդիպինք թվականի մը, որ Աղեքսանդրի հետ կապ մը ունենալ կցուցնե, որևէ պետք չկա բառացի առնլով խոսքը՝ կապելու զայն ոչ Աղեքսանդրի թագավորության, ոչ տիեզերակալության, ոչ մահվան և ոչ ուրիշ թվականի մը հետ։ Այլ ընդհանրապես և սովորաբար Սելևկյանն է, որ Աղեքսանդրի կհամարվեր Ասորվոց քով»[7]։

Գ. Սարգսյանը գրում է. «...Խորենացին ու իր հետևորդները բնավ միայնակ չեն Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթիվը Սելևկոս Ա-ի գահակալման տարեթվի հետ նույնացնելու գործում, և որ այդ նույնացման փաստից արդեն, որտեղ էլ որ այն հանդիպի, ինքնին բխում է երկվական այդ տարեթվի՝ հենց մ. թ. ա. 312/311 թ. տեղադրվելու անխուսափելիությունը» (էջ 137)։

Ահա այս ելակետն է, որ ապակողմնորոշել է բազմաթիվ ուսումնասիրողների, այդ թվում Հ. Տաշյանին ու Գ. Սարգսյանին՝ առանձին դեպքերում դառնալով նրանց սայթաքումների պատճառը։

Համոզվելու համար, որ ամենևին էլ այդպես չէ, ինչպես պնդում են Հ. Տաշյանն ու Սարգսյանը, որ հիշյալ ելակետը չի կարող ունենալ և չունի նրանց նշած ազդեցության ուժը, բերենք թեկուզ մի երկու փաստ։

Այսպես, XII—XIII դարերի արաբ աշխարհագիր Յակուտ ալ-Համավին, որի տեղեկության ակունքը անկասկածելիորեն ասորական ոլորտն է, խոսելով Մուֆարդին քաղաքի հիմնադրման մասին, «Աշխարհագրական բառգրքում» գրում է. «Ասում են նաև, թե շինությունն սկսել է Քրիստոսից հետո 300 թվականին, իսկ Ալեքսանդրի թվագրության 623 թվականին»[8] (ընդգծումը մերն է— Լ. Շ.)։

Մի կողմ թողած Մուֆարդին քաղաքի հիմնադրման տարեթվի առթիվ թույլ տրված անճշտությունը, Յակուտ ալ-Համավիի այս տեղեկությունը անհերքելի և ամենն կասկածից դուրս մի փաստ է, որով կարելի է համոզված ասել, թե ալեքսանդրյան թվագրության ելակետը նաև 323 թ. է (մ. թ. ա.), այսինքն Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարին։

Դիմենք նաև Եվսեբիոս Կեսարացուն։ Խոսելով Անտիոքոս Եպիփանեսի կողմից Երուսաղեմի տաճարի կողոպուտի մասին, նա գրում է. «Որպէս ձգեալ ի վախճանէն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ մինչև ց Ա (առաջին) ամն Եպիփանու Անտիոքայ յամս ՃԾ (150)...»[9]։

Սրանից հետո մեկ այլ առիթով էլ հայտնում է. «Լինին այսուհետև յԵպիփանէս Անտիոքայ մինչև ԵԺ (15)-երորդի ամն Տիբերիայ ամք ՄԱ (201)։ Եւ յԱղեքսանդրէ Մակեդոնացւոյ մինչև ի նոյն ամն Տիբերիայ՝ ամք ՅԾԲ (352)[10]։

---

7 Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, «Հանդես ամսօրյա», 1905, հոկտեմբեր, էջ 299։

8 Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 115—116։

9 Եվսեբիոս Կեսարացի, Ժամանակագրութիւն, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 192։

10 Նույն տեղում, էջ 195։

Նախքան Եվսեբիոսի սույն հաշվումներին հետևելը, հարկ է նշել, որ ըստ նրա՝ Ալեքսանդր Մակեդոնացու վախճանը (մահը) տեղի է ունեցել ՃԺԴ (114)-երորդ օլիմպիադի առաջին տարում, այն է 323 թ. (մ. թ. ա.), Անտիոքոս Եպիփանեսը թագավորել է ՃՇԱ (151)-երորդի երրորդ տարվանից՝ 173 թ. (մ. թ. ա), իսկ Տիբերիոսը կայսր է դարձել ՃՂԸ (198)-երորդի երրորդից՝ 15 թ. (մ. թ.)[11]։

Այսպիսով, Եվսեբիոս Կեսարացին նույնպես, որը քաջատեղյակ է սելևկյան տոմարին, վերոհիշյալ հաշվումները կատարելիս ելակետ է ունեցել Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվականը (323 թ. մ. թ. ա.), որովհետև, իրոք, 150 տարի է, ըստ Եվսեբիոսի, Ալեքսանդրի մահվանից մինչև Անտիոքոս Եպիփանեսի թագավորությունը (173 թ. մ. թ. ա.) և 352 տարի է մինչև Տիբերիոսի կայսրության 15-րդ տարին (29 թ. մ. թ.)։ Ուրեմն, եթե Եվսեբիոս Կեսարացին մի դեպքում նշել է 150 տարի «ի վախճանէն Այեքսանդրի Մակեդոնացւոյ...», որը իր ձևով ամենևին չի տարբերվում Խորենացու նշածից, իսկ մյուս դեպքում էլ՝ 352 տարի «յԱղեքսանդրէ Մակեդոնացւոյ...», ուր նկատի է առնված դարձյալ նրա վախճանը, այդպես էլ պետք է հասկանալ։ Այլապես սխալից չենք կարող խուսափել, եթե, ասենք, Եվսեբիոսի կամ Յակուտ ալ-Համավիի այս տեղեկություններն էլ ենթարկենք սելևկյան տոմարի ամենազոր ուժին, ինչպես վարվել ու վարվում են այդ տեսակետի պաշտպանները։

Այսքանից հետո դժվար է համակերպվել պատմագիտության մեջ իշխող այն կարծիքին, թե Ալեքսանդրի անվան հետ կապված ժամանակագրական ամեն մի տեղեկություն, ինչպես Գ. Սարգսյանը կասեր՝ որտեղ էլ որ այն հանդիպի, պետք է բացատրել սելևկյան էրայով։ Ինչպե՞ս համակերպվել, երբ զգալի է թիվն այն մատենագիրների՝ Եվսեբիոս Կեսարացի, Հակոբ Ջգոն, Անանուն (Ա), Խորենացի, Խորենացու միջնադարյան հետևորդներից շատերը, Յակուտ ալ-Համավի, գուցե և ուրիշներ՝ այս առումով մեզ առ այժմ անծանոթ, որոնք շեղվում են այդ ընդհանրացնող «օրենքից»։ Ավելին, վերոհիշյալ հեղինակների մոտ եղած փաստերը գալիս են ասելու, որ Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ կապված ժամանակագրական տեղեկությունները չի կարելի միակերպ բացատրել, որ մի դեպքում նկատի է առնված ու պետք է նկատի առնել նրա թագավորության սկիզբը՝ 336 թ. (մ. թ. ա.), մյուս դեպքում՝ տիեզերակալության տարեթիվը՝ 330 թ. (մ. թ. ա.), երրորդ դեպքում՝ մահվան թվականը՝ 323 թ. (մ. թ. ա.)։

Առանձնացնելով այս հեղինակների տեղեկությունները, վիճարկվող տեսակետի հիմքում գրեթե ոչինչ չի մնում և դրանով իսկ այն կորցնում է իր ուժը։ Մեր խոսքն, իհարկե, այն տեղեկությունների մասին չէ, որոնք վերաբերում են սելևկյան ու ալեքսանդրյան թվականների նույնացման խնդրին։ Այսպիսի փաստեր իրոք կան և քիչ չեն, երբ ալեքսանդրյան կամ Ալեքսանդրի թվագրություն ասելով սելևկյանն է հասկացվել[12], որը, սակայն, ինչպես նախապես նշվել է, բնավ կապ չունի քննարկվող հարցի հետ։ Բանն այն է, որ ոչ միայն չի կարելի հավասարության նշան դնել Ալեքսանդր Մակեդոնացու թագավորության այս կամ այն տարին հիշատակող ժամանակագրական տեղեկությունների միջև, այլև՝ սրանց ու ալեքսանդրյան կոչված թվագրության միջև։ Ահա այս

11 Տե՛ս նույն տեղում, էջ 191, 238, 262։

12 Կան, իհարկե, նաև բացառություններ, որոնք հարկադրում են ուշադիր լինել անգամ այս դեպքում։ Նկատի ունենք Յակուտ ալ-Համավիի օրինակը և ենթադրում ենք, որ նմանները կլինեն։

կարևոր հանգամանքն է նաև, որ անտեսվել է Սեն-Մարտենի, Հ. Տաշյանի, Գ. Սարգսյանի և ուրիշների կողմից ու պատճառ է դարձել Խորենացու և այլոց (Հակոբ Զգոնի, Անանունի, Խորենացու հետևորդների) սխալ մեկնաբանության։ Պատճառ է դարձել, որ հիշյալ բոլոր հեղինակների տեղեկությունները նրանք անուղղակի հասկանան... իսկ մենք գտնում ենք, որ Խորենացու վիճարկվող տեղեկությունները պետք է անպայման ուղղակի հասկանալ։ Սա է, մեր կարծիքով, հարցաքննման միակ անսխալ ուղին, եթե, իհարկե, ուսումնասիրողը կաշկանդված չէ պատմագիտական նախապաշարումներով, եթե նա, իրոք, ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում հավատարիմ է Խորենացուն Խորենացիով հասկանալու սկզբունքին։

* * *

Մեր երկրորդ առաջարկը վերաբերում է պարսից Արշակունի առաջին երկու գահակալների գահատարիների հարցին, այն հարցին, որ Խորենացու երկի մեջ հասած գահատարիների փոխարեն՝ Արշակ Քաջ՝ 31, Արտաշես՝ 26, պետք է ընդունել Ասողիկինը՝ Արշակ Քաջ՝ 57, Արտաշես՝ 31 և սրանք համարել Խորենացու սկզբնագիր տեղեկություններ։ Այս բանին հիմք են ծառայել Ասողիկի և Անանունի[13] ավանդած համապատասխան տվյալները և այն, որ նրանք, ինչպես գրում են, ընդօրինակել են Խորենացուն.

Սակայն այստեղ էլ Գ. Սարգսյանը տրամադրված չէ Անանունի հաղորդմանը հավատալուն։ Եվ այդ բնական է, քանի որ մեր առաջարկներից յուրաքանչյուրի հաստատումը ոչ միայն նրա կազմած ժամանակագրության, այլև այդ ժամանակագրությանը նվիրված աշխատության հերքումն է նշանակում։ Ահա թե ինչու նա օգնության է կանչում Ն. Ադոնցին ու Գ. Արգարյանին, որոնցից «առաջինը՝ սոսկ նշմամբ,— գրում է նա,— իսկ երկրորդը՝ մանրամասն համադրությունների հիման վրա, հայտնել են այն միտքը, որ Անանուն պատմիչը թեև հիշատակում է և՛ Խորենացուն, և՛ Ասողիկին, բայց իրականում արտագրել է միայն Ասողիկից։ Նշենք,— ավելացնում է Գ. Սարգսյանը,— որ այս ասված է ժամանակագրական տվյալների հետ ոչ մի առնչություն չունեցող նկատառումներով» (էջ 130)։

Անառարկելի համարելով սույն կարծիքը, Գ. Սարգսյանն այնուհետև շարունակում է. «...Շահինյանը լոկ խոսքերով է մերժում Ն. Ադոնցի և Գ. Արգարյանի տեսակետը, հակադրելով դրան սոսկ Անանունի հայտարարությունը (որին հիշյալ հեղինակները առանց իր օգնության էլ քաջատեղյակ են) և որպես ապացույց ծառայեցնելով գեռևս ապացուցելին» (էջ 130)։

Մի կողմ թողած սույն պարբերության «լոկ խոսքերով է մերժում» ավելորդ միտքը (ավելորդ, որովհետև ինքն էլ է ասում, որ մենք Ն. Ադոնցի ու Գ. Աբգարյանի տեսակետին հակադրել ենք Անանունի հաղորդումը), ներկա պահին կարևորն այն է, թե ինչո՞վ է Անանունի հաղորդումը, որն ըստ Սարգսյանի հայտարարություն է, անհավատալի կամ ապացուցելի համարվում, իսկ Ն. Ադոնցի և Գ. Աբգարյանի կարծիքը՝ անառարկելի ճշմարտություն։ Ավելին, ինչո՞ւ է Գ. Սարգսյանը մոռանում, որ Անանունի նույն հատվածի և Խորենա-

13 Այս Անանունը Սեբեոսի աշխատությանը կից պարսից Արշակունիների երկրորդ արքայացուցակի հեղինակն է (Տե՛ս Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ. Գ), որին համարելու ենք Անանուն Բ նույն աշխատությունում եղած մյուս երկու Անանուններից (Անանուն Ա, Անանուն Դ) տարբերելու նպատակով։

ցու համապատասխան տեղեկությունների անմիջական կապը (հետևաբար Անանունի անմիջական ծանոթությունը Խորենացու հետ) ոչ պակաս հաջողությամբ և մանրամասն համադրություններով ապացուցել է Ստ. Մալխասյանը[14] (դարձյալ ժամանակագրական խնդիրների հետ ամենևին կապ չունեցող նկատառումներով), որը տվյալ խնդրում ավելի է համոզում, քան Գ. Աբգարյանը։ Ի վերջո, ինչո՞ւ է մոռանում Գ. Սարգսյանը, որ այս Անանունի՝ Խորենացուց օգտվելու պարագան այնքան ակնբախ է, որ համարյա կասկած չի հարուցել անցյալում, եթե, իհարկե, նկատի չունենանք պրոֆ. Ն. Ադոնցի և Գ. Աբգարյանի կարծիքը։

Մեր կարծիքով, Ասողիկը հանդիսացել է մի տեսակ միջնորդ օղակ Խորենացու և Անանունի միջև։ Մի հեղինակ, որն իր կատարած գործով ավելի է թեթևացրել Անանունի աշխատանքը։ Անանունը պարզապես օգտվել է նաև Ասողիկի ծառայությունից, քանի որ վերջինս, ինչպես տեսնում էր Անանունը (իսկ այդ նա կտեսներ Խորենացու երկը ձեռքի տակ ունենալիս, և ոչ թե Ասողիկին կուրորեն հավատալով, ինչպես պնդում է Գ. Սարգսյանը), ժամանակին արել էր իր կատարելիք աշխատանքի մեծ մասը՝ համառոտագրելով և Խորենացու երկից առանձնացնելով Պարթևների արքայացանկը։ Հենց այս առումով է Ասողիկը արժանացել Անանունի ուշադրության, և հատկապես այն բանից հետո, երբ Անանունը Ասողիկի մոտ տեսել է Խորենացու՝ իրեն հետաքրքրող տեղեկությունների հարազատ կրկնությունը։ Հավատացած ենք, եթե Անանունը տեսներ, որ Ասողիկը բուն հարցերում (Պարթևների հաջորդականության, անունների և գահատարիների) տարբերվում է Խորենացուց, բնավ էլ նրան չէր վկայակոչի, այլ կբավարարվեր միայն Խորենացիով։ Եվ ինչո՞ւ պետք է վկայակոչեր, երբ նա չէր կարող չիմանալ ու, իրոք, իմացել է (այս բանը չի ժխտում ո՛չ Գ. Աբգարյանը, ո՛չ էլ Գ. Սարգսյանը), որ Ասողիկի սկզբնաղբյուրը Խորենացին էր, իսկ Ասողիկը մի սովորական ընդօրինակող էր, ինչպես ինքը։

Բացի այս, ինչպես երևում է Սեբեոսի աշխատության երրորդ գլխի խորագրից, Անանունը իր առջև լուրջ և պատասխանատու խնդիր է դրել՝ ըստ հավաստի և ճշմարիտ մատենագիրների երկրորդել Պարթևների (ենթադրվում է նաև հայ Արշակունիների) արքայացանկը, ցուցաբերելով քննադատական վերաբերմունք մեզ առայժմ անհայտ մեկ ուրիշ հեղինակի (Անանուն Ա-ի) կասկածելի ժամանակագրության նկատմամբ։ Այսպիսի նպատակ ունեցող հեղինակը մի՞թե կարող էր հենվել միայն Ասողիկի վրա և հենց այնպես հայտարարել, թե ընդօրինակել է նաև Խորենացուն։ Ո՛չ, չէր կարող, եթե այստեղ գոնե փորձում ենք հավատալ հեղինակին, իսկ չհավատալու որևէ հիմնավոր պատճառ չկա։

Ի դեպ, ոչ թե մենք է, որ այդպիսի պատճառ չենք նկատում, այլ, թող զարմանալի չերևա, ցույց չեն տվել անգամ Անանունին չհավատացողները։ Օրինակ, Ն. Ադոնցը սոսկ կարծիք է հայտնել[15], Գ. Աբգարյանը բավարարվել է Խորենացու, Ասողիկի և Անանունի համապատասխան տեղեկությունների (այն էլ մի մասի՝ մինչև «...ի վերայ աշխարհիս Հայոց») հատվածների լոկ վկայա-

---

14 Ստ. Մալխասյանց, Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 35—41։

15 Н. Адонц, Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского (տե՛ս «Византийский временник», 1901, вып. 1—2, էջ 69)։

կոչումով[16]։ Փաստորեն նա ոչ միայն չի նշել իր կարծիքը հիմնավորող հանգամանքները, այլև բաց է թողել համեմատելի բուն հատվածները՝ Պարթևների արքայացանկերը, որոնք վկայակոչված հատվածների հետ միասին հենց իր տեսակետի դեմ են խոսում։ Իսկ ի՞նչ է արել Գ. Սարգսյանը։ Նախ, տեղի «սղությունը» ստիպել է նրան հրաժարվելու «Ասողիկի, Անանունի և Խորենացու համապատասխան հատվածների խիստ պերճախոս համադրությունից», որոնք, իբրև թե, պետք է իր կարծիքը «հաստատեին»։ Երկրորդ, որպեսզի Գ. Սարգսյանը Անանունին հավատար, այսինքն հավատար, որ նա անմիջապես ծանոթ էր և ընդօրինակել էր նաև Խորենացուն, պետք է վերջինի տեքստը որևէ, գոնե փոքր, ազդեցություն թողներ Անանունի վրա, որի հետքն անգամ, ըստ Սարգսյանի, չկա։ «Ասենք,— ավելացնում է Գ. Սարգսյանը,— կնշվեր, թե Արշակը, թագավորեցնելով Վաղարշակին՝ իր երկրորդն է դարձրել, ինչպես ասված է Խորենացու մոտ, կամ մի, թեկուզ աննշան բան»։ Երրորդ, իրավացի համարելով Ն. Ադոնցին ու Գ. Աբգարյանին, Գ. Սարգսյանը, ի տարբերություն նրանց, զարմանալիորեն իմացել է, որ «Անանուն պատմիչը պարզապես չի ունեցել (կամ այդ ժամանակ ձեռքի տակ չի ունեցել) Խորենացու երկը»։

Բայց ինչո՞ւ մոռանալ, որ Խորենացին միջնադարյան Հայաստանում, հատկապես X և հետագա դարերում, ոչ միայն անառարկելի հեղինակություն էր, այլև նրա գործը դասագիրք էր հայոց դպրոցներում։ Ուրեմն, այդ ինչպե՞ս պատահեց, որ այսքան մասսայականություն վայելող մի գործ (ապացույց թեկուզ դարերի փոթորիկների միջով մեզ հասած նրա հինգ տասնյակ ձեռագրերը. XI—XII դարերում նրան ընդօրինակած հեղինակների բազմաթիվ ու բազմապիսի տարընթերցվածները՝ X դարի հեղինակների համեմատությամբ և այլն) Անանունը ձեռքի տակ չունեցավ։

Բացի այդ ավելորդ է Անանունից պահանջել, որ նա շեղվեր բուն նպատակից։ Այսինքն Պարթևների արքայացանկը «ծաղկեցներ» այնպիսի տեղեկություններով, որ Խորենացին ուներ, իսկ Ասողիկը չուներ։ Ինչ վերաբերում է «փոքր» կամ «աննշան» բանին, որը ցույց տար Խորենացու անմիջական ազդեցությունը, Անանունը, իրոք, ունի, և աննկատ է մնացել Գ. Սարգսյանին։ Այսպես, Գ. Սարգսյանը քաջատեղյակ է, որ պարթև VI գահակալը Խորենացու մոտ (եթե նկատի չառնենք գրչական զանազան սխալ տարբերակները) հանդես է գալիս կրկնանունով՝ Արշեզ (Արշես) և Արտաշես (Բ, 18, 19)։ Ասողիկը նույն գահակալի համար օգտագործել է Արտաշես տարբերակը, իսկ Անանունի մոտ Արշես է։ Սա, մեր կարծիքով, Գ. Սարգսյանի ցանկացած «աննշան» բաներից է, որը հենց Խորենացու անմիջական ազդեցությունն է նշանակում։

Չնայած կարևոր են, սակայն թողնենք «աննշան» բաները, քանի որ Խորենացու անմիջական ազդեցությունը հաստատող ավելի մեծ փաստեր կան Անանունի մոտ և ակնբախ են։ Այնքան ակնբախ, որ, եթե Ասողիկը չլիներ, ոչ մի հետազոտող բնավ չէր ասի, թե Անանունի անմիջական սկզբնաղբյուրը Խորենացին չէ։ Դրանք այն նույնանման տեղեկություններն են, որոնք առկա են ինչպես Խորենացու, այնպես էլ Անանունի մոտ՝ նրանց ավանդած արքա-

16 Գ. Աբգարյան, Սեբեոսի «Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 56, ծանոթ. 59, էջ 63։

յայուցակներում[17]։ Անանունը, փաստորեն, ոչ միայն հաղորդել է Պարթևների արքայացանկը ըստ Խորենացու ներկայացնելու մասին, որին կարելի էր հավատալ կամ չհավատալ, այլ, իրոք, կատարել է իր խոստումը, որին արդեն անկարելի է չհավատալ։

Սակայն մի պահ մոռանանք Անանունին, իսկ Ասողի՞կը։ Չէ որ Ասողիկի մոտ Պարթև առաջին արքաների գահատարիները նման չեն Խորենացու մեզ հասած համապատասխան գահատարիներին, չնայած իր վկայությամբ դրանք նույնպես ընդօրինակված են Խորենացուց[18]։ Արդ, ո՞ր գահատարիները համարել Խորենացու սկզբնագիր տեղեկություններ՝ Խորենացո՞ւնը, թե՞ Ասողիկինը։ Այս հարցը ի վերջո մտահոգել է նաև Գ. Սարգսյանին, որի առթիվ նա ուշադրություն է հրավիրել հետևյալի վրա։ Նախ, շոշափելով հարցի հնագրական կողմը, ընթերցողին հայտնել է, որ ինչպես Խորենացու մեզ հասած բոլոր ձեռագրերում, այնպես էլ նրա միջնադարյան հետևորդների մոտ (բացի Ասողիկից ու Անանունից) վիճարկվող գահատարիները համարյա տարընթերցված-ներ չունեն։ Երկրորդ, ըստ Գ. Սարգսյանի «գրեթե ղերոյի է հավասար» այն բանի հավանականությունը, որ չորս, այն էլ տարբեր նիշեր՝ «ԼԱ» և «ԻԶ», ղանգվածային ձևով փոփոխվեին ու դառնային «ԾԷ» և «ԼԱ»։ Երրորդ, Ասողիկից ավելի վաղ ապրող հեղինակ Ուխտանեսի մոտ Պարթև առաջին արքաների համար նույն գահատարիներն են, ինչ որ կան Խորենացու մեզ հասած ձեռագրերում (էջ 131—132)։ Այսպիսով, ինչպես եզրակացնում է Գ. Սարգսյանը, «Ասողիկը՝ առաջին երկու պարթև արքաների գահատարիների հաղորդած իր թվերով, լրիվ մեկուսանում է, դառնում առանձնակի երևույթ։ Նրանից առաջ էլ, նրանից հետո էլ,— շարունակում է Գ. Սարգսյանը,— ունենք այն թվերը, որոնք հայտնում է Խորենացին, ուստի և բնական է նշված փոփոխության պատճառները փնտրել հենց Ասողիկի մեջ, և տյդ խնդրի քննությունը վերապահել ոչ թե Խորենացիագիտությանը, այլ Ասողիկի պատմության ուսումնասիրությանը» (էջ 132—133)։

Գ. Սարգսյանի հաջորդ գործը լինում է այն, որ նա (թեպետ անցողակի) քննության է առնում Ասողիկի «Պատմության» համապատասխան հատվածները, որոնց քիչ հետո կանդրադառնանք, և հանգում հետևյալ եզրակացություններին. «Նա (Ասողիկը— Լ. Շ.) ինչ-ինչ պատճառներով վտարել է պարթևական արքայացանկից երկրորդ գահակալ Արտաշեսին...», որ «Արշակ Քաջին այստեղ (Ասողիկի մոտ— Լ. Շ.) հատկացված 57 տարին ճիշտ և ճիշտ հավասար է Խորենացու մոտ Արշակ Քաջին և նրա որդի Արտաշեսին տրված գահատարիների գումարին (31+26=57)», որ «կարծես թե Արտաշեսը հեռացել է՝ գահատարիները թողնելով իր հորը» (էջ 133, ընդգծումները մերն են— Լ. Շ.)։

Ասողիկի վերոհիշյալ գահատարիների մասին նույն կարծիքը առաջին անգամ հայտնել է բազմավաստակ հայագետ Ստ. Մալխասյանը՝ Ասողիկի «Տիեզերական պատմության» 1885 թ. հրատարակության 39-րդ ծանոթության մեջ, որին, առանց քննադատական մոտեցման, հետագայում համամիտ են գտնը-

17 Տե՛ս Խորենացի, Բ, 2, 3—9, 68—69, հմմտ. Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ. Դ։

18 Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ), Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 53։

վել Հ. Տաշյանը[19] և Գ. Արգարյանը[20]։ Այսուհանդերձ հիշյալ կարծիքը, որով Ասողիկին վերագրվում է խիստ քմահաճ մատենագրի դեր, զանազան աղբյուրների զումարային, սոսկ պատահական հավաստարության վրա հենված անհավանական ենթադրություն է և որևէ փաստով չի հիմնավորվում։ Դրա անհավանականությունը երևում է անմիջապես, երբ փորձում ենք պատճառաբանել, թե ինչո՞ւ կամ ի՞նչ անհրաժեշտությունից զրգված պետք է Ասողիկը Պարթև արքաների գահատարիները զումարեր և այդ զումարը հատկացներ միայն մեկին։

Ի դեպ, Գ. Սարգսյանը ճիշտ է վարվել, որ ուշադրություն է հրավիրել սույն հարցի վրա, սակայն նույնքանով էլ սխալ է նա, երբ, իր առաջադրած հարցի պատասխանը գտնել չկարողանալով, ավելացրել է. «Իսկ Լ. Շահինյանը, նախքան Ասողիկի... տվյալները անվերապահորեն օգտագործելը, պարտավոր էր բանդել հանգույցը, լուծել Ասողիկի այս ներքին հակասությունները» (էջ 133)։

Արդ, թույլ տանք հարցնելու՝ իսկ ինչո՞ւ Շահինյանը։ Ինչո՞վ է Շահինյանը պարտավոր բանդել «հանգույցը» կամ լուծել Ասողիկի «ներքին հակասությունները», երբ դրանք, իրականում, արհեստական հակասություններ են և ի հայտ են գալիս Գ. Սարգսյանի պաշտպանած կարծիքի դեպքում։ Ուրեմն, տվյալ խնդրում պարտավոր է ինքը՝ Գ. Սարգսյանը, իսկ Շահինյանը ամենևին էլ պարտավոր չէ, քանի որ նրա համոզումով Ասողիկը զերծ է նման «հակասություններից»։ Ավելին, մեր համոզումով, եթե Ասողիկը ծանոթ լիներ Արշակ Քաջի և Արտաշեսի այն գահատարիներին, որոնք հասել են Խորենացու մեզ ծանոթ ձեռագրերով՝ Արշակ Քաջ՝ 31, Արտաշես՝ 26, այսպես էլ ընդօրինակելու էր՝ առանց զումարման կամ հանման թվաբանական գործողությունների։ Կվարվեր այնպես, ինչպես վարվել է Խորենացու այլ տեղեկությունների նկատմամբ՝ մնացած բոլոր դեպքերում (խոսքը մինչև Խոսրով Մեծ ժամանակահատվածի մասին է), ինչպես վարվել են Խորենացու միջնադարյան բոլոր հետևորդները։ Իսկ է, Ասողիկը կարող էր իմանալ, որ գործ ունի ոչ թե պատահական թվերի, այլ պատմական փաստերի հետ և այդքան կամայաբար չէր վարվի Խորենացու տեղեկությունների նկատմամբ։ Բացի այս, Ասողիկի «Պատմության» համապատասխան բաժինների ուսումնասիրությունից երևում է, որ նա որևէ պատճառ չուներ երկու առանձին գահակալների գահատարիները զումարել և հատկացնել միայն մեկին։ Այդպիսի հիմնավոր պատճառ ցույց չեն տվել ո՛չ նախորդները, ո՛չ էլ Գ. Սարգսյանը և, հավատացած ենք, որ այդ բանը հնարավոր էլ չէ ցույց տալ։

Երբ հանդամանորեն ծանոթանում ենք Ասողիկի, ինչպես նաև Խորենացու համապատասխան տեղեկություններին, պարզվում է, որ Ասողիկը ոչ միայն չի վարվել այնպես, ինչպես կարծում են, այլ, ընդհակառակը, նրա շնորհիվ մեզ են հասել Խորենացու սկզբնագիր տեղեկությունները, որոնք կարևորագույն դեր ունեն իր իսկ՝ Խորենացու ամբողջ ժամանակագրության նախնական պատկերը վերականգնելու համար։

Համոզվելու համար նախ, որոշ վերապատմումով, դիմենք Ասողիկի՝ տվյալ խնդրին վերաբերող տեղեկություններին։ Խոսելով Արշակունիների անկախացման մասին, թե ինչպես Արշակ Քաջը Ալ. Մակեդոնացու մահվանից 60

19 Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, մասն Բ, Վիեննա, 1960, էջ 357 և հտ.։
20 Գ. Արգարյան, նշվ. աշխ., էջ 63, ծանոթ. 71։

տարի հետո և Անտիոքոս Թեոսի թագավորության 11-րդ տարում ապստամբվել ու դուրս է եկել Մակեդոնացիների գերիշխանությունից, Ասողիկը շարունակում է. «Հալածէ (Արշակ Քաջը—Լ. Շ.) և ի Բաբելոնէ զՄակեդոնացւոց իշխանութիւնն և բազաւորէ ընդ ամենայն՝ ամս Մէ (57):

Եւ յետ նորա որդի նորա Արտաշէս ամս ԼԱ (31): Եւ յետ սորա թագաւորէ սորին որդի (Արտաշեսի— Լ. Շ.) Արշակ, որ կոչեցաւ Մեծ»[21]։

Ապա, մի պահ թողնելով Պարթև հաջորդ գահակալների թվարկումը, և անդամ Արշակ Մեծի գահատարիքը չնշելով, Ասողիկն սկսում է պատմել սելևկյան արքաներ Դեմետրիոսի և վերջինիս եղբայր Անտիոքոս Սիդեացու դեմ Արշակ Մեծի մղած պատերազմների մասին, նկարագրում է Անտիոքոս Սիդեացու պարտությունն ու մահը և հայտնում. «Յայնմ ժամանակի Արշակ Մեծ բոռն Արշակայ Քաջի թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց։ ...և ինքն չուեալ գնաց ի Բահլ»[22]։

Այս միջանկյալ պատմությունից հետո, որով ընդհատվել էր Պարթևաց արքայացանկը, Ասողիկն անմիջապես շարունակում է. «Արդ այսպէս զատուցեալ Երեին երկու ցեղքն թագաւորութեանց, Պարսիցն և Հայոցն։

Արշակ Քաջ՝ նախնեաց երկուց ցեղից, թագաւորեցելոյ Պահլաւականին և Արշակունւոյն՝ ամենայն քաջութեամբ թագաւորեաց ամս Մէ (57). յետ որոյ որդին զատուցեալք բազաւորք Պարսից. Արշակ Մեծ ամս ՄԲ (52)...» և այլն[23]։ Եվ այսպես՝ սկսած Արշակ Մեծից ու Վաղարշակից, Ասողիկի մոտ հաջորդաբար թվարկված են նախ՝ պարսից և ապա՝ հայ Արշակունիները, նրանցից յուրաքանչյուրն իր գահատարիքով։

Ինչպես երևաց, Ասողիկը Արշակ Քաջի, ինչպես նաև նրա թագավորության տևողությունը հիշատակել է ոչ թե մեկ, այլ երկու անդամ, երկու անգամն էլ նրան տվել է 57-ամյա թագավորության ժամանակաշրջան։ Կարևոր է հատկապես Արշակ Քաջի մասին Ասողիկի առաջին տեղեկությունը, որովհետև նրա 57-ամյա թագավորության կողքին հիշատակված է նաև իր որդի և հաջորդ Արտաշեսը՝ 31-ամյա թագավորությամբ։ Ուրեմն, եթե անգամ ընդունելու լինենք, որ Ասողիկի մոտ Արշակ Քաջին հատկացված 57 տարին Խորենացու համապատասխան գահատարիների գումարն է, այնժամ հարկադրված կլինենք նրա աշխատությունից հանել՝ «...յետ նորա (խոսքն Արշակ Քաջի մասին է— Լ. Շ.) որդի նորա Արտաշէս ամս ԼԱ (31)» տողը։ Ավելին, Արտաշեսի գոյությունը հաստատող ապացույցներ են նաև Ասողիկի այն զուգահեռ տեղեկությունները, որոնց համաձայն Արշակ Մեծը ոչ թե որդին, այլ բոռն է համարված Արշակ Քաջի, պարզ ասած, Ասողիկը Արտաշեսին հատկացրել է ժառանգական նույն ծագումն ու տեղը, ինչպես Խորենացու և իր միջնադարյան մյուս հետևորդների մոտ է։

Որ Ասողիկի մոտ Արշակ Քաջի 57 տարին Խորենացու համապատասխան գահատարիների գումարը չէ, որ Արտաշեսը չի վտարված պարթևական արքայացանկից և թագավորել է Արշակ Քաջից անմիջապես հետո 31 տարի, ի վերջո, Ասողիկի մոտ են պահպանվել Խորենացու սկզբնագիր գահատարիները՝ Արշակ Քաջի և Արտաշեսի համար, ապացուցվում են նաև հետևյալ փաստերով։

21 Ասողիկ, էջ 29։
22 Նույն տեղում, էջ 30։
23 Նույն տեղում, էջ 31։

ա. Քանիցս ասվել է, որ ըստ Խորենացու և ըստ Ասողիկի Արշակ Քաջը իր թագավորությունն սկսել է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո (տե՛ս Խորենացի, Բ, 1—2, հմմտ. Ասողիկ, էջ 29)։ Համոզված ենք, որ այդ տարեթիվը ըստ նրանց 262 թ. է (մ. թ. ա.), սակայն, նկատի ունենալով հարցի շուրջը եղած և առայժմ վիճելի երկու կարծիքը (մեկը Գ. Սարգսյանի պաշտպանածը), Արշակ Քաջի գահակալության սկիզբ ընդունենք նաև 251 թ. (մ. թ. ա.)։

բ. Խորենացու մեկ ուրիշ տեղեկությամբ Պարթև չորրորդ գահակալ Արշակը գահը ժառանգել է հայ Արշակունիների հարստության հիմնադիր Վաղարշակի թագավորության 13-րդ տարում (տե՛ս Խորենացի, Բ, 68)։ Ուրեմն, համաձայն այս տեղեկության, Վաղարշակն ու հիշյալ Արշականի անմիջական նախորդ Արշակ Մեծը 12 տարով համաժամանակյա թագավորներ են եղել։

գ. Արշակ Մեծը Խորենացու մեզ հասած ձեռագրերով թագավորել է ԾԲ—53 (Բ, 68), իսկ ըստ Ասողիկի՝ ԾԲ (52) տարի (Ասողիկ, էջ 31), հետևաբար Վաղարշակը թագավորել է նրա իշխանության 41 կամ 40-րդ տարվանից։

դ. Ինչպես Խորենացին, այնպես էլ Ասողիկը վկայում են, որ Վաղարշակին թագադրել է Արշակ Մեծը այն ժամանակ, երբ սպանվել է սելևկյան գահակալ Անտիոքոս Սիդեացին (տե՛ս Խորենացի, Բ, 2—3, հմմտ. Ասողիկ, էջ 30)։ Վերջինիս սպանությունը, ըստ պատմագիտության, տեղի է ունեցել 128 կամ 127 թ. մ. թ. ա. (վերցնելու ենք մեկը՝ 128 թ.), ըստ Խորենացու մեր վերականգնած ժամանակագրության՝ 134 թ. (մ. թ. ա.)[24]։ Ըստ Ասողիկի՝ եգիպտական գահակալ Պտղոմեոս Եվգերտես II-ի 12-րդ տարում (տես էջ 77), այսինքն դարձյալ 134 թ. (մ. թ. ա.), որովհետև վերջինս, ինչպես ընդունված է և ինչպես Եվսեբիոս Կեսարացու մոտ է, թագավորել է 145 թվականից (մ. թ. ա.), իսկ Ասողիկը Պտղոմյանների ժամանակագրության հարցերում հետևել է Եվսեբիոսին։

Խորենացու և Ասողիկի վկայակոչված այս տեղեկություններից բացահայտ երևում է, որ Արշակ Քաջի թագավորության սկզբից մինչև Արշակ Մեծի 41-րդ տարին կամ, որը նույնն է, մինչև Վաղարշակի գահակալումն ընկած ժամանակահատվածի տևողությունը պետք է հավասար լինի Պարթև առաջին երկու արքաների գահատարիների գումարին, սրան էլ ավելացրած երրորդ գահակալ Արշակ Մեծի 40 տարին։

Գահատարիների այս գումարը Խորենացու մեզ հասած տեղեկությունների համաձայն 97 տարի է՝ Արշակ Քաջ՝ 31 + Արտաշես՝ 26 + Արշակ Մեծի 40 տարին։ Եթե հետևելու լինենք Գ. Սարգսյանի պաշտպանած տեսակետին, նույնքան տարի էլ Ասողիկի մոտ է՝ Արշակ Քաջ՝ 57 + Արշակ Մեծի 40-ը, իսկ մեր կարծիքով Ասողիկի մոտ այն հավասար է 127 կամ 128 տարվա՝ Արշակ Քաջ՝ 57 + Արտաշես՝ 31 + Արշակ Մեծի 39-ը կամ, որն ավելի հավանական է, 40 տարին։

Այժմ փորձենք գահատարիների հիշյալ գումարները (97 և 128) զետեղել պատմական այն ժամանակահատվածում, որը նույնաբար նշել են Խորենացին ու Ասողիկը և տեսնել, թե ո՞ր գահատարիներն են լինելու Խորենացուներ։ Ի դեպ, ելնելով այն բանից, որ տվյալ ժամանակահատվածի սահմանագծային տարե-

24 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 48—49՝ ներդիր աղյուսակ։

թվերի շուրջը կան և կարող են լինել տարակարծություններ, նպատակահարմար է հարցը քննել հնարավոր բոլոր եղանակներով։

Առաջին. ենթադրենք, որ ըստ Խորենացու իրոք Արշակ Քաջը թագավորել է 251 թ. (մ. թ. ա.), իսկ 128 թ. (մ. թ. ա.) Արշակ Մեծի 41-րդ, Անտիոքոս Սիդեացու սպանության և Վաղարշակի թագադրման տարին է։ Միջանկյալ ժամանակաշրջանը, ինչպես տեսնում ենք, 123 տարի է (251—128), որը Խորենացու՝ մեզ հասած գահատարիների գումարից ավելի է 26 տարով (123—97)։

Երկրորդ. 251 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Քաջի գահակալում, 134 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Մեծի 41-րդ, Անտիոքոս Սիդեացու սպանության, Վաղարշակի թագադրման տարեթիվ։ Միջանկյալ ժամանակաշրջանը՝ 117 տարի (251—134), որը ավելի է Խորենացու «նշած» գահատարիների գումարից 20 տարով (117—97)։

Երրորդ. 262 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Քաջի գահակալում, 128 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Մեծի 41-րդ, Անտիոքոս Սիդեացու սպանության, Վաղարշակի թագադրման տարեթիվ։ Միջանկյալ ժամանակաշրջանը՝ 134 տարի (262—128). ավելի է Խորենացու «նշածից» 37 տարով։

Չորրորդ. 262 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Քաջի գահակալում. 134 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Մեծի 41-րդ, Անտիոքոս Սիդեացու սպանության և Վաղարշակի թագադրման տարեթիվ։ Միջանկյալ ժամանակահատվածը 128 տարի է (262—134), որը ավելի է Խորենացու «նշած» գահատարիների գումարից 31 տարով (128—97)։

Այս հաշվումները, որոնք կատարվեցին Խորենացու մեզ հասած գահատարիների և նրա համապատասխան տեղեկություններից ենթադրված հավանական տարեթվերի հիման վրա, պարզ ցույց են տալիս, որ Արշակ Մեծը չէր կարող ո՛չ Անտիոքոս Սիդեացուն սպանել, և ո՛չ էլ Վաղարշակին թագադրել։ որովհետև այդ դեպքերից 20, 26, 31 կամ 37 տարի առաջ նա կնքած կլիներ իր մահկանացուն։ Վիճակը չի փոխվում նաև, եթե հաշվի մեջ ներառենք Արշակ Մեծի թագավորության ամբողջ տևողությունը։ Այսինքն, հակառակ Խորենացու ենթադրենք, որ նա այդ գործերը կատարել է ոչ թե իր թագավորության 41-րդ տարում, այլ ամենավերջին տարում, ասենք 53-րդին։ Այս անգամ էլ Արշակ Մեծը մահացած կլինի հիշյալ դեպքերից 7, 13, 18 կամ 24 տարի առաջ։

Այսպիսով, բացահայտ անհամաձայնություն է ի հայտ գալիս մի կողմից Խորենացու պատմաժամանակագրական կամ նկարագրական բնույթի տեղեկությունների, մյուս կողմից էլ՝ նրա մեզ հասած գահատարիներով ու ենթադրյալ տարեթվերով կատարված հաշվումների միջև։ Դրանով, իհարկե, կասկածելի են դառնում վերևում բերված բոլոր տվյալները՝ թե՛ Պարթև առաջին երկու արքաների գահատարիները, թե՛ սահմանագծային տարեթվերը, սակայն, մեր կարծիքով, կասկածելին առաջին հերթին գահատարիներն են, քանի որ քննության առնվեցին սահմանագծային հնարավոր այն բոլոր տարեթվերը[25], որոնք կարող էին նկատի առնվել Խորենացու կողմից։

25 Խորենացու գահատարիների ստուգման համար կարելի է կատարել նաև այլ հաշվումներ՝ փոփոխելով Վաղարշակի թագադրման տարեթիվը։ Բանն այն է, որ ըստ առանձին ուսումնասիրողների այդ իրադարձությունը, հետևաբար և Անտիոքոս Սիդեացու մահը, իբրև թե ըստ Խորենացու, տեղի է ունեցել 153 (Գուտշմիդ, Գ. Սարգսյան), 152 (Սեն-Մարտեն), 150, 145 (Հ. Գաթրճյան), 149 (Մ. Չամչյան) կամ 144 (Մ. Էմին) թվականներին (մ. թ. ա.)։ Սույն տարեթվերով, սակայն,

Այժմ դիմենք Ասողիկի ավանդած գահատարիներին։ Ասողիկի գահատարիների ստուգման համար կա ընդամենը երկու հնարավորություն, որովհետև սահմանագծային տարեթվերից մեկը՝ Վաղարշակի թագադրման տարեթիվը, նրա մոտ առավել որոշակի է և տարակարծիքների տեղիք տալ չի կարող։

Առաջին. ենթադրենք, թե ըստ Ասողիկի 251 թ. (մ. թ. ա.) Արշակ Քաջի թագավորության առաջին տարին է, իսկ 134 թ. (մ. թ. ա.) նրա մոտ, այսինքն Պտղոմեոս Եվերգետես Բ-ի թագավորության 12-րդը, Անտիոքոս Սիդեացու սպանության և Վաղարշակի թագադրման տարին։ Միջանկյալ ժամանակաշրջանը հավասար է 117 տարվա (251—134), որը պակաս է նրա ավանդած գահատարիների գումարից 11 տարով (128—117)։ Այս հաշվով Արշակ Մեծը կարող է Անտիոքոս Սիդեացուն սպանած լինել և թագադրել Վաղարշակին, սակայն դեռևս հարցի հավանական լուծումը չէ, քանի որ այդ գործերը նա կատարած կլինի իր թագավորության 30-րդ տարում, հակառակ Խորենացու նշած 41-րդի։

Երկրորդ. 262 թ. (մ. թ. ա.)՝ Արշակ Քաջի թագավորության սկիզբ, 134 թ. (մ. թ. ա.)՝ Անտիոքոս Սիդեացու սպանության և Վաղարշակի թագադրման տարեթիվ։ Միջանկյալ ժամանակահատվածը 128 տարի է, 128 տարի է նաև Ասողիկի ավանդած գահատարիների գումարը՝ Արշակ Քաջ՝ 57 + Արտաշես՝ 31 + Արշակ Մեծի 40 տարին։

Ինչպես տեսնում ենք, Ասողիկի ավանդած գահատարիների գումարը կատարելապես փոխհամաձայն է թե՛ իր և թե՛ Խորենացու տեղեկություններով ենթադրված սահմանագծային տարեթվերի միջանկյալ ժամանակի տևողությանը։ Դրանով, իրոք, Արշակ Մեծը կարող է իր թագավորության 41-րդ տարում պարտության մատնել ու սպանել Անտիոքոս Սիդեացուն, թագադրել Վաղարշակին, զուգահեռ թագավորել 12 տարի էլ, որից հետո գահի ժառանգորդ Արշականը Վաղարշակի 13-րդ տարվանից կսկսի իր թագավորությունը, ինչպես Խորենացու մոտ է։

Այսպիսով, այնտեղ, ուր բացահայտ անհամաձայնություն կար Խորենացու մեզ հասած զուգահեռ տեղեկությունների միջև, այսպես ասած, ուր Խորենացին «հակասում» էր ինքն իրեն, հնարավոր է դառնում լուսաբանել միմիայն Ասողիկի ավանդած գահատարիների միջոցով։ Նման պարագաներում, թվում է, անկարելի է կասկածելն անգամ, որ, իրոք, Պարթև առաջին երկու արքաների համար Ասողիկի ավանդած գահատարիներն են Խորենացու սկզբնագիր տեղեկությունները, որ, հետևաբար, Խորենացու մոտ այդ գահատարիները ենթարկվել են հետագա փոփոխությունների և դրանց վրա հենվել չի կարելի։

Այս բանը, իհարկե, ապացույց է նաև, որ Ասողիկի մոտ Արշակ Քաջին հատկացված 57 տարին ամենևին էլ Խորենացու ձեռագրերով մեզ հասած համապատասխան գահատարիների գումարը չէ՝ Արշակ Քաջ՝ 31 + Արտաշես՝ 26, սակայն, նկատի ունենալով հարցի կարևորությունը, քննենք այն մեկ ուրիշ եղանակով։

Մի պահ ընդունենք, թե ճիշտը Գ. Սարգսյանի պաշտպանած տեսակետն է, որի համաձայն Պարթև առաջին արքաների գահատարիների գումարը՝ մինչև

հաշվումներ կատարելը ավելորդ կլինի, որովհետև դրանք խիստ անհավանական տարեթվեր են, հիմնականում արգասիք հն Խորենացու վիճարկվող գահատարիների անքննադատ օգտագործման, մասամբ էլ պայմանավորված են այլ, դարձյալ վիճելի հանգամանքներով։

Արշակ Մեծի թագավորության 41-րդը, հավասար է լինելու 97 տարվա։ Այս ժամանակաշրջանի սկիզբը Արշակ Քաջի թագավորության առաջին տարին է, որը, ինչպես նշված է մեր հոդվածում, Ասողիկի մոտ դրված է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո, ինչպես նաև Անտիոքոս Թեոսի 11-րդ ու Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 30-րդ տարիներին[26]։ Ըստ գերիշխող կարծիքի, որին համամիտ է նաև Դ. Սարգսյանը, Ասողիկի այս երեք հավասարաղոր տեղեկությունները նշում են 250 կամ 251 թ. (մ. թ. ա.), եթե Պտղոմեոս Ֆիլադելֆոսի Լ (30)-րդի փոխարեն, հետևելով Ստ. Մալխասյանի առաջարկին և ինչպես Եվսեբիոս Կեսարացու մոտ է, հասկանանք ԼԴ (34)-րդ տարի, իսկ 60 տարին էլ հաշվենք ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից (323 թ. մ. թ. ա.), այլ սելևկյան տոմարի սկզբնատարուց (312 կամ 311 թ. մ. թ. ա.)։ Պայմանականորեն ընդունենք նաև այս կարծիքը։

Այժմ փորձենք ետընթաց հաշվով թվագրել Պարթև արքաների հիշյալ 97-ամյա դումարը՝ հիմք ընդունելով Պտղոմեոս Եվերգետես Բ-ի 12-րդ տարին (134 թ. մ. թ. ա.), որն, ըստ Ասողիկի, Վաղարշակի թագավորության սկիզբն է։ Ի դեպ, այս տարեթիվը առավել անխախտ հենարան է, քանի որ դրա շուրջ, ինչպես նշվեց, տարակարծիքներ լինել չեն կարող։ Այսպիսով, ըստ Ասողիկի կունենանք ոչ թե 250 կամ 251, այլ 231 թ. մ. թ. ա. (134+97), իբրև Արշակ Քաջի թագավորության սկիզբ, որը չի համընկնում նրա նշած տարիներից և ոչ մեկի հետ, եթե, իհարկե, այս կամ այն չափով հարազատ ենք մնում պատմական փաստերին։ Օրինակ, 231 թ. (մ. թ. ա.) հեռու է Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից ոչ թե 60, այլ 92 (323—231), իսկ սելևկյան տոմարի սկզբնատարուց 81 կամ 80 տարով (312/311—231)։ Բացի այս, այդ տարեթիվը համընկնում է ոչ թե Անտիոքոս Թեոսի 11-րդ տարվան, այլ նրա հաջորդ Սելևկոս Կալինիկոսի 14 կամ 13-րդին, ոչ թե Պտղոմեոս Ֆիլադելֆոսի 30 կամ 34-ին, այլ սրա հաջորդ Պտղոմեոս Եվերգետես Ա-ի 15-ին[27]։

Արդ, ինչո՞վ բացատրել այս ամենը։ Արդյո՞ք Ասողիկը չի իմացել իր հիշատակած գործիչների ստույգ տարեթվերը[28]։

Ամենևին, այստեղ մեղքը Ասողիկինը չէ։ Այս բոլորի պատճառը հապշտապ ասված այն կարծիքներն ու ենթադրություններն են, որոնք, իբրև թե, Ասողիկին «ճիշտ հասկանալու» ուղիներ են նշում։ Որպեսզի համոզվենք այս բանում, այժմ էլ հրաժարվենք այդ ենթադրությունից և Ասողիկին հասկանանք այնպես, ինչպես գրել է։ Այս մոտեցումով նրա նշած համապատասխան դահատարիների դումարը, ինչպես վերևում տեսանք, հավասար է 128-ի։ 128-ամյա ժամանակաշրջանի սկիզբը (դարձյալ ետընթաց հաշվով 134 թվականից) 262 կամ 263 թ. է (մ. թ. ա.), որը, իրոք, 61-րդ տարին է Ալեքսանդր Մակեդոնացու մահվան։

Այսպիսով, երբ հրաժարվում ենք Ասողիկին ներկայացվող անհարկի պահանջներից, պարզվում է, որ նրա տեղեկությունները ոչ միայն չեն հակասում, այլև փոխնիփոխ լրացնում են միմյանց և կատարյալ փոխհամաձայնության մեջ են։ Ահա այս փոխհամաձայնությունն է այն անհերքելի ապացույցը, որի հիման վրա կարելի է եզրակացնել հետևյալը.

26 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 163—164։

27 Այս հաշվումների համար նախընտրել ենք Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրության» տվյալները։

28 Ստույգ ասելով նկատի ունենք նրան քաջածանոթ Եվսեբիոս Կեսարացու տարեթվերը։

Առաջին. Ասողիկի մոտ, իրոք, Արշակ Քաջին տրված է 57-ամյա թագավորություն, իսկ նրա որդի Արտաշեսին՝ 31։ Ուրեմն Արշակ Քաջի 57-ամյա թագավորությունը նրա ու Արտաշեսի գահատարիների գումարը չէ, և ոչ էլ Արտաշեսը վտարված է պարթևական արքայացանկից։

Երկրորդ. Վերստին հաստատվում է, որ երբ Ասողիկը նշում է, թե Պարթևները անկախացան Ալ. Մակեդոնացու մահվանից 60 տարի հետո, այսպես էլ պետք է հասկանալ, այսինքն 60 տարին հաշվել 323 կամ 322 թվականից (մ. թ. ա.)։

Երրորդ. Քանի որ Ասողիկը 60 տարին հաշվել է 323 կամ 322-ից, իսկ Սելևկյանների գահատարիների գումարն էլ նրա մոտ ճիշտ 60 տարի է մինչև Անտիոքոս Թեոսի 11-րդ տարին (Սելևկոս Նիկատոր՝ 31 + Անտիոքոս Սոտեր՝ 19 + Անտիոքոս Թեոսի 10-ը տարին), ուրեմն կասկածել չի կարելի, որ նա Սելևկյանների ժամանակագրությունը, հակառակ Գ. Սարգսյանի պահանջի, սկսել է Ալ. Մակեդոնացու մահվանից։

Չորրորդ. Հիմնավորվում է մեր այն ենթադրությունը, որով Ասողիկի նշած Պտղոմեոս Ֆիլադելֆոսի Լ (30)-րդ տարվա փոխարեն պետք է հասկանալ Ի (20)-րդ տարին, որովհետև վերջինիս 20-րդ տարին 264, 263 կամ 262 թվականն է (մ. թ. ա.) և համընկնում է նրա մյուս տվյալների հետ։ Ի դեպ, «Լ» և «Ի» տառերի միմյանցով փոփոխվելու դեպքերը ձեռագրերում քիչ չեն։

Այսպիսով, երբ որևէ կերպ չի հիմնավորվում «գահատարիների գումարի» մասին կարծիքը, և, ավելին, ամենատարբեր ուղիներով ապացուցվում է հակառակը, Արշակ Քաջի և Արտաշեսի գահատարիների փոփոխված լինելու փաստն արդեն ակնբախ և անկասկածելի է դառնում, անգամ անկախ այն բանից, թե ո՞ւմ մոտ է պահպանվել այդ գահատարիների սկզբնագիրը՝ Խորենացո՞ւ, թե՞ Ասողիկի։ Սրանով իսկ Գ. Սարգսյանի պնդումը, որով, իբր, ոչ նմանաձև տառերի զանգվածային փոփոխության հնարավորությունը գրեթե հավասար է զերոյի (էջ 132), իսպառ կորցնում է իր ուժը։ Հենց այն բանը, որ Արշակ Քաջի և Արտաշեսի գահատարիները Խորենացու և Ասողիկի մոտ հանդիպում են ոչ նմանաձև տառերի զանգվածային փոփոխման օրինակով, անհերքելի ապացույց է ընդդեմ այդ ենթադրության։ Նույնատիպ օրինակներ հանդիպում են նաև մատենագրական շատ ու շատ գործերում, և զարմանալի է անգամ, որ դրանք չի նկատել Գ. Սարգսյանը։ Այսպես, Սամվել Անեցու որոշ ձեռագրերում Մաթուսաղայի կյանքի տևողությունը՝ Ղամեքին ունենալուց հետո մինչև ջրհեղեղ, ըստ «այլ օրինակաց», ՉՉԲ տարի է, հանդիպում է նաև ՉԿԼ տարի. կամ՝ հրեաների Եգիպտոսից ելնելուց մինչև Տիբերիոսի կայսրության 15-րդը անցել էր ՌՇԽ տարի, հանդիպում է նաև ՍԽԴ. կամ՝ Ապուպաքը, Օթման և Ամր կառավարել են «ամս ԺԴ», հանդիպում է նաև ԼԸ[29]։ Գրիգոր Կամախեցու որոշ ձեռագրերով՝ «Թվին ՊՂ այրևցին ըվխտրշայն...», հանդիպում է նաև «Թվին ՉԱ...»։ Դավիթ Բաղիշեցու մոտ Վարդանանց նահատակների թիվը՝ ՌՄԼ հոգի, հանդիպում է նաև ՌԼՉ. կամ՝ Դագիկ Ա-ի թագավորելը՝ «Թվին ՆԽԲ», հանդիպում է նաև ՆՄԱ[30] և այլն։

Բերված օրինակները, որոնց թիվը կարելի է տասնապատկել ու հարյուրապատկել, անհերքելի ապացույցներ են հօգուտ այն բանի, որ կարող են մի-

29 Տե՛ս Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 6, 53, 83։
30 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, Երևան, 1956, էջ 265, 328, 338։

մյանցով փոփոխվել նաև ոչ նմանաձև տառերը՝ անգամ զանգվածաբար, որ այդպիսի փոփոխությունները հազվադեպ չեն և, հետևաբար, Գ. Սարգսյանի պնդումը այդ առթիվ հիմնավոր չէ։

Հենվելով այս և հատկապես շարադրանքում բերված նախորդ տվյալների վրա, համոզված կարելի է եզրակացնել, որ Խորենացու մեզ հասած ձեռագրերում, ինչպես նաև նրան ընդօրինակող շատ մատենագիրների մոտ Պարթև առաջին երկու արքաների գահատարիները սկզբնագիր չեն, որ դրանք ինչ-ինչ ուղիներով ենթարկվել են հետագա փոփոխությունների և դրանց սկզբնագիրը պահպանվել է Ասողիկի ու Անանունի մոտ[31]։

• • •

Մեր երրորդ առաջարկով, ինչպես նշվել է, Պարթև չորրորդ գահակալ Արշականին պետք է տալ Ս (50)-ամյա թագավորություն (ընդունելով, որ սա է Խորենացու սկզբնագիրը, ինչպես ժամանակին առաջարկել են Սեն-Մարտենն ու Թ. Ավդալբեգյանը), Խորենացու և իր հետևորդների մոտ հանդիպող Լ (30) տարվա փոխարեն։ Այս առաջարկի հիմքում ընկած է Խորենացու այն տեղեկությունը, որով Տիգրան Բ-ը թագավորել է հիշյալ արքայի 49-րդ տարվանից (Բ, 14) և, հետևաբար, նա (Արշականը) 49 տարուց պակաս չի թագավորել։

Անընդունելի համարելով այս առաջարկը, Գ. Սարգսյանը, միաժամանակ, պաշտպանում է Ք. Պատկանյանի ու Ն. Ադոնցի տեսակետը, այն է՝ Արշականի Լ (30) տարին համարել սկզբնագիր ու անփոփոխ, իսկ Տիգրան Բ-ի թագավորությունը հաշվել Պարթև հինգերորդ գահակալ Արշանակի 19-րդ տարվանից։

Սույն առաջարկը առերևույթ հավանական է երևում, երբ հարցը քննում ենք Խորենացու ժամանակագրության միայն մի հատվածի՝ Տիգրան Բ—Արշեղ ժամանակահատվածի շրջանակներում, ինչպես վարվել է Գ. Սարգսյանը, և ընդհակառակը, դառնում է խիստ անհավանական, երբ դիտում ենք այդ ժամանակագրության և առհասարակ Խորենացու «Հայոց պատմության» ընդհանրության մեջ։

Համոզվելու համար նախ հիշյալ երկու առաջարկների համեմատության միջոցով տեսնենք, թե ի՞նչ առավելություններ կամ ի՞նչ թերություններ ունի նրանցից յուրաքանչյուրը և որի՞ն պետք է տալ նախապատվությունը։

Սույն համեմատությունը կատարելիս այդ առաջարկները նշանակենք Ա (առաջին) և Բ (երկրորդ) տառերով, «Ա»-ով՝ մեր պաշտպանածը, իսկ «Բ»-ով՝ Գ. Սարգսյանի պաշտպանածը։

1. Երկու դեպքում էլ համաժամանակագրական տվյալները հավանական են երևում տվյալ հատվածի գահատարիներով։ Այսպես, եթե Արշականին տալու լինենք 50 տարի (Ա-ի դեպքում), կունենանք հետևյալը՝ սրա 24-րդից Հայաստանում, ըստ Խորենացու, թագավորում է Տիգրան Բ-ի հայր Արտաշեսը՝ շարունակելով թագավորել 25 տարի (Բ, 11, 12), ապա հաջորդում է Տիգրան Բ-ը նույն արքայի (Արշականի) 49-րդ տարվանից։ Եթե Արշականի 30-ամյա թագավորությունը համարենք սկզբնագիր (Բ-ի դեպքում), Արտաշեսը իր 25-ամյա թագավորության սկզբի 7 տարիներին ժամանակակից է Արշականին,

31 Նկատի ունենալով Ասողիկին համարյա ժամանակակից Ուխտանեսի օրինակը, որի մոտ Խորենացու մեզ հասած գահատարիներն են՝ Արշակ Քաջ՝ 31, Արտաշես՝ 26, ենթադրում ենք, որ Խորենացու երկի՝ Ասողիկին ու Անանունին ծանոթ ձեռագիրը մեզ չի հասել։

մնացած 18 տարին նրա որդի և հաջորդ Արշանակին։ Հետևաբար, անհավանական չէ, որ Տիգրանը թագավորած լինի վերջինիս 19-րդ տարվանից։

2. Եթե Ա-ի դեպքում պետք է փոփոխված համարել Արշականի գահատարիքը՝ 30-ի փոխարեն 50 (քիչ հետո պարզ կդառնա, թե ինչու 50 և ոչ ավելի), իսկ Տիգրան Բ-ին վերաբերող համաժամանակագրությունը անփոփոխ՝ Արշականի 49-րդից, Բ-ի դեպքում հակառակն է՝ փոփոխված համարել համաժամանակագրությունը՝ Արշականի 49-ի փոխարեն՝ Արշանակի 19-ը, գահատարիքը անփոփոխ՝ Արշական 30։ Այստեղ մի փոքր առավելություն ունի Բ առաջարկը, քանի որ գահատարիքը որևէ տարընթերցում չունի (որը ամենևին հիմք չէ դրա անփոփոխ լինելուն), իսկ համաժամանակագրությունը ունի տարընթերցումներ։ Օրինակ, Խորենացու և նրա առանձին հետևորդների մոտ Տիգրան Բ-ի թագավորության սկզբնատարվա առթիվ հանդիպում է՝ Արշականի 29-րդից, 19-րդից, 10-րդից, 27-րդից, անգամ Արշանակի 49-րդից, սակայն ոչ մի տեղ չի հանդիպում Գ. Սարգսյանի ցանկացածը՝ Արշանակի 19-րդից, չնայած հնարավոր է, որ այսպես էլ լիներ։ Ի դեպ, հիշյալ բոլոր տարընթերցումները բացահայտ սխալ են և չէին կարող լինել Խորենացու մոտ։ Այսպես, Տիգրանը չէր կարող ըստ Խորենացու թագավորել Արշականի 29-րդից, 19-րդից, 10-րդից կամ 27-րդից, քանի որ, դարձյալ ըստ Խորենացու, նույն արքայի 24-ից թագավորել է Արտաշեսը 25 տարի, նոր ապա Տիգրանը։ Չէր կարող թագավորել նաև Արշանակի 49-ից, որովհետև վերջինս Խորենացու մոտ ընդամենը 32 (վրիպակով՝ 31) տարի է թագավորել։

3. Ա-ի դեպքում, ինչպես իրավացիորեն նկատել է Գ. Սարգսյանը, Պարթև 6-րդ գահակալ Արշեղը կարող է թագավորել միայն Տիգրան Բ-ի մահվանից մեկ տարի հետո, հետևաբար, նրանք համաժամանակյա թագավորներ լինել չեն կարող, իսկ Խորենացու մոտ, ընդհակառակը, Տիգրանը իր մահվանից 2 կամ 3 տարի առաջ դաշինք է կնքել Արշեղի հետ և նրանից օգնական զորք է ստացել (Բ, 19)։ Բ-ի դեպքում այս անհամաձայնությունը չկա, որը և առավելություն է Ա-ի համեմատությամբ։

4. Տիգրան Բ-ի որդի և անմիջական հաջորդ Արտավազդը Խորենացու մոտ (Բ, 22, 23) ոչ թե օրերի կամ ամիսների, այլ, ինչպես ճիշտ նկատել են Ն. Ադոնցն ու Գ. Սարգսյանը, տարիների թագավորություն է ունեցել[32], որից հետո է թագավորել Արշամը (Բ, 24)։ Հակառակ սրան, Բ-ի դեպքում Տիգրանին անմիջապես հաջորդելու է Արշամը, իսկ Արտավազդը իրեն հատկացված գործերով դուրս է մղվում արքայացանկից, քանի որ նրան թագավորելու ժամանակ չի մնում։ Ահա այս անհամաձայնությունից էլ վերծ է Ա առաջարկը, որը առավելություն է Բ-ի համեմատությամբ։

5. Բ առաջարկի պաշտպաններ Ն. Ադոնցն ու Գ. Սարգսյանը Խորենացու երկի երկրորդ գրքի 22 և 23 գլուխների պահանջներից հարկադրված, որոնց համաձայն, ինչպես նշվեց վերևում, Արտավազդը սոսկ օրեր կամ ամիսներ չէ, որ իշխել է, ենթադրաբար նրան հատկացնում են 2-ամյա թագավորություն։ Եվ քանի որ սրանով ստեղծվում է ժամանակագրական անհամաձայնություն հայ ու պարսից թագավորների շարքերում, ինչպես նաև Խորենացու ամբողջ ժա-

[32] Н. Адонц, Начальная история Армении..., տե՛ս Византийский временник, 1901 вып. 1—2, էջ 85, ծանոթ. 5։ Գ. Սարգսյան, Մ. Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 24։

մանակագրական համակարգում, նրանք երկու տարով էլ ավելացնում են Պարթև 6-րդ գահակալ Արշեղի թագավորությունը՝ 20-ի փոխարեն տալով 22 տարի։ Սրանով էլ, սակայն, չի ստեղծվում կատարյալ համաձայնություն Արշեղի 20-ամյա գահատարիքի նշումից զատ, Խորենացին հայտնում է նաև, որ սա (Արշեղը) իր թագավորության 20-րդին, որը միաժամանակ նրա կյանքի վերջին տարին էր, թագադրել է Արտավազդի հորեղբայր և հաջորդ Արշամին (Բ, 24)։ Ն. Ադոնցն ու Գ. Սարգսյանը սրբագրելի են համարում նաև Խորենացու այս տեղեկությունը՝ ենթադրելով, որ Արշամի թագադրումը տեղի է ունեցել ոչ թե Արշեղի 20-րդ, այլ 22-րդ տարում։ Ա առաջարկի դեպքում, երբ Արշականին 50-ի փոխարեն տալիս ենք 50 տարի և սրա 49-րդից հաշվում Տիգրանի թագավորությունը, պարզվում է, որ վերջինիս մահվանից մինչև Արշամ, երբ ապրել ու գործել է Արտավազդը, 20-ամյա մի ժամանակաշրջան ինչ-ինչ պատճառներով չի նշված Խորենացու մոտ, որը պետք է վերականգնել[33]։

Այսպիսով, երբ զուգակշռում ենք տվյալ խնդրին վերաբերող այս երկու առաջարկները, պարզ է դառնում, որ Խորենացու ժամանակագրական համակարգի միայն մի հատվածի շրջանակներում դրանք համարյա հավասարազոր են և դժվար է առավելությունը տալ մեկին կամ մյուսին։ Սակայն փոխվում է պատկերը, երբ այդ առաջարկները դիտում ենք Խորենացու ժամանակագրական համակարգի և առհասարակ նրա «Հայոց պատմության» ընդհանրության մեջ։ Այստեղ արդեն բացահայտ առավելությունը Ա առաջարկի կողմն է, որով և հավանական է դառնում նրա ընդունումը։

Այսպես, Բ առաջարկի դեպքում, ինչպես ցույց է տվել փորձը (նկատի ունենք Ք. Պատկանյանի և Գ. Սարգսյանի վերականգնած ժամանակագրությունները), հռոմեական գործիչներն ու կայսրերը Խորենացու մոտ հանդես են գալիս իրենց իրական պատմական ժամանակներից ավելի վաղ։ Ստացվում է այնպես, որ Խորենացին շուրջ 500-ամյա ժամանակաշրջանի (մ. թ. ա. I դարի կեսից մինչև մ. թ. V դարի կեսը) հռոմեական կայսրերից և ոչ մեկի ստույգ ժամանակագրությունը չի իմացել։ Օրինակ, Ք. Պատկանյանի կազմած աղյուսակի համաձայն, որին հետևել է նաև Ստ. Մալխասյանը, Խորենացու շեղումը հռոմեական կայսրերի ստույգ ժամանակագրության համեմատությամբ հասնում է 18—20 տարվա[34] (ըստ Ստ. Մալխասյանի՝ 18—24), իսկ Գ. Սարգսյանի աղյուսակով՝ 30—40 տարվա[35]։ Քսան տարվա շեղում էլ մեզ մոտ կլինի, եթե փորձենք Ա-ի փոխարեն Բ առաջարկը ներառնել նաև մեր կազմած ժամանակագրական աղյուսակում[36]։

---

33 Սույն պահին այնքան էլ էական չէ, թե այդ 20-ամյակից քանի՞ տարին հատկացնել Արտավազդին՝ ամրո՞ղջը, ինչպես ենթադրել է Թ. Ավդալբեգյանը, թե՞ սկզբի 7 կամ 10 տարին, որը, մեր կարծիքով, առավել հավանական է։

34 Տե՛ս К. Патканов, Материалы для армянского словаря, вып. II, Петербург 1884, էջ 49—64 (հմմտ. Մ. Խորենացու «Հայոց պատմության» Ստ. Մալխասյանի թարգմանության հավելվածը, Երևան, 1940, 1961, 1968)։

35 Գ. Սարգսյանը լոկ խոսքով համամիտ է, որ Խորենացին իմացել է հռոմեական կայսրերի ստույգ ժամանակագրությունը, սակայն, ինչպես ցույց ենք տվել մեր մի հոդվածում, իր կազմած աղյուսակով հակառակ արդյունքի է հասել (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 141—153)։

36 Մեզ համար այսպիսի մի աշխատանք կատարել է Գ. Սարգսյանը՝ մեր դեմ գրած քննադատական հոդվածում (էջ 127—129) և չի կռահել, որ դրանով ցուցադրվում է հենց իր պաշտպանած առաջարկի անհավանականությունը։ Ի դեպ, Գ. Սարգսյանը դրանով հետապնդել է որոշակի

Այս արտառոց երևույթը, որը, ցավոք, առանց քննադատական վերաբերմունքի առ այսօր ընդունվում է, մեծագույն և անհերքելի ապացույցն է Բ առաջարկի անհավանականության, քանի որ Խորենացին ճաշատեղյակ է Հռոմի պատմությանը և, պարզապես, անհնար է, նրան վերագրել հռոմեական կայսրերի ժամանակագրությանը անգիտակ մատենագրի դեր, Խորենացին իմացել է հռոմեական կայսրերի ժամանակագրությունը իրեն ծանոթ սկզբնաղբյուրների նման, իսկ այդ աղբյուրների տեղեկությունները, ինչպես հայտնի է, համարյա չեն տարբերվում մեր իմացածից։ Ուրեմն, Խորենացու ժամանակագրական համակարգում հռոմեական կայսրերը պետք է հանդես գան իրենց իրական, պատմական ժամանակներում, որը, փաստորեն, նրա երկից բիրդ պարտադիր պահանջ է։

Ահա թե ինչու մեզ համար նախընտրելին ոչ թե Ռ. Սարգսյանի պաշտպանած առաջարկն է (Արշական՝ 30, Տիգրան Բ՝ Արշականի 19-ից), որով հռոմեական բոլոր կայսրերը տեղահանվում են իրենց ապրած ժամանակներից, այլ մյուսը՝ Արշական՝ 50, Տիգրան Բ՝ Արշականի 49-րդ տարվանից, քանի որ այս դեպքում, ինչպես երևում է մեր կազմած աղյուսակից[37], այդպիսի անհավանական վիճակ չի ստեղծվում։ Այսինքն, հռոմեական կայսրերը (աննշան բացառություններով) հանդես են գալիս իրենց ճիշտ ժամանակներում, որը պահանջվում էր Խորենացու երկի շարադրանքից։ Այս է պատճառը նաև, որ չի կարելի Արշականին 50-ից ավելի գահատարի հատկացնել, ասենք՝ 60, 70 և այլն, քանի որ այս դեպքում էլ հռոմեական կայսրերը հանդես կգան 10, 20 և այլն տարով ուշ, նայած թե որքան է ավելացված Արշականի գահատարիքը։

Այսպիսով, Արշականին 30-ի փոխարեն 50-ամյա թագավորություն հատկացնելը ամենևին էլ այս կամ այն ուսումնասիրողի կամքի գործը չէ, ինչպես կարծում է Գ. Սարգսյանը, այլ սովորական մի վրիպակի ուղղում է, Խորենացու հաբյուրավոր տեղեկությունների պահանջներից ելնելով։

Ընդունելով Արշականի 50 տարին, անխուսափելի է դառնում նաև հայոց թագավորների շարքում 20-ամյա պակաս ժամանակի լրացումը, որը ինչ-ինչ պատճառներով բացակայում է (սա, իհարկե, Խորենացու մոտ եղակի դեպք չէ) և, ինչպես ցույց ենք տվել[38], զետեղվելու է Տիգրան Բ-ի մահվանից մինչև Արշամ ժամանակահատվածում։ Այս լրացումը, որը կատարվում է Խորենացու համապատասխան տեղեկությունների ցույցումով, անխուսափելի է. նախ հայ ու պարսից շարքերի համամասնությունը պահպանելու համար և ապա, որ Խո-

---

Նպատակ։ Եթե հիշում է ընթերցողը, Ռ. Սարգսյանի կազմած ժամանակագրությունը առարկելի ենք համարել հատկապես այն բանով, որ դրա համաձայն Խորենացու նշած յուրաքանչյուր դեպք, իրադարձություն թվագրվում է երեք տարբեր թվականներով։ Այս առարկությունը մեղմելու նպատակով, Գ. Սարգսյանը նման, ինչպես ինքը կասեր՝ «անիծյալ» վիճակ ստեղծել է նաև մեզ համար։ Կողքկողքի դնելով իր ստեղծած ու մեզ վերադրած ժամանակագրության և ապա մեր կազմած աղյուսակի համապատասխան տարեթվերը (էջ 128), նա փորձել է պատրանք ստեղծել, թե տեսեք, Շահինյանի մոտ էլ Խորենացու ժամանակագրությունը «երկփեղկվում է», որ, իբր, Խորենացու նշած միևնույն իրադարձությունը թվագրվում է 2 տարբեր թվականներով։ Իրականում Շահինյանի մոտ այդպիսի բան չկա և, հետևաբար, Գ. Սարգսյանի դատողություններն այդ առթիվ ավելորդ են։ Ամեն ոք պատասխանատու է իր կատարածի համար, իսկ ուրիշի կատարածի համար՝ երբեք։ Ինչի նման կլիներ, երբ մենք էլ, ինչպես վարվել է Գ. Սարգսյանը, մեր առաջարկներից մեկն ու մեկը խցկեինք իր կազմած աղյուսակում և իր համար տարեթվեր հորինեինք...

37 Տե՛ս Բաներեր Մատենադարանի, № 8, էջ 48, ներդիր աղյուսակը։

38 Տե՛ս նույն տեղում, էջ 43։

ռենացու ժամանակագրության մեջ, որ շարքի համեմատությամբ էլ վերցնելու լիներք, հռոմեական գործիչները ժամանակագրորեն մնան իրենց տեղերում։ Ի վերջո, որ Տիգրան Բ-ի որդի Արտավազդը ունենա թագավորելու ժամանակ, որովհետև ըստ Խորենացու նա տարիների թագավորություն է ունեցել։

Արդ, եթե վերը քննարկված երկու առաջարկներից նախընտրելին մեր պաշտպանածն է՝ Արշական՝ 50 տարի, Տիգրան Բ՝ Արշականի 49-րդից, ինչպե՞ս վարվել Տիգրան—Արշեղ ժամանակահատվածի անհամաձայնության հետ, որը դրսևորվում է միայն այս դեպքում և Դ. Ծարգսյանի միակ հիմնավոր առարկությունն է՝ ընդդեմ մեր վերականգնած ժամանակագրության։

Ինչպես պարզվում է Խորենացու համապատասխան տեղեկությունների ուսումնասիրություններից, այդ «անհամաձայնություն» կոչվածը իրականում այդպիսին չէ՝ բառիս բուն իմաստով։ Այսպես, Պարթևների մոտ (և ոչ միայն Պարթևների) ընդունված կարգ է եղել, որ արքայորդիները, հատկապես գահաժառանգները, դեռևս հոր կենդանության ժամանակ թագավոր են նշանակվել իրենց տերության տարբեր մասերում՝ կուսակալություններում։ Այսպիսի փաստեր հանդիպում են ոչ միայն օտար աղբյուրներում և հանրահայտ են, այլև ավանդել է Խորենացին։ Օրինակ, ըստ Խորենացու Արտաշես I-ը, երբ Պարթևներից խլեց «արքայից արքայությունը», «Արշական ընդ իւրով ձեռամբ կացուցանէր թագաւոր Պարսից, որպէս զՏիգրան որդի իւր՝ հայոց» (Բ, 11)։ Կամ, դարձյալ ըստ Խորենացու, Պարթև VIII գահակալ Արտաշեսի որդին՝ Ներսեհը, հոր կենդանության ժամանակ, այն էլ մանուկ հասակում, եղել է «արքայ Ասորեստանի ի Բաբելոն» (Բ, 33)։ Արդ, տվյալ խնդրի համար ուշագրավը Խորենացու այս վերջին տեղեկությունն է։ Նախ որպես ապացույց, որ թագավոր հոր կենդանության ժամանակ որդին կարող էր թագավոր նշանակվել պարթևական տերությունում, երկրորդ՝ Ասորեստանը, ըստ Խորենացու, պարթևական տերության այն կուսակալություններից է եղել, ուր թագավորել են արքայորդիները, և երրորդ, որ ամենակարևորն է, հիշյալ Ներսեհի հայր Արտաշեսը՝ Խորենացու նշած ժառանգական հաջորդականությամբ, Տիգրան II-ի հետ դաշինք կնքած Արշեղ արքայի թոռն է (Բ, 68)։ Ըստ որում, Խորենացու համապատասխան գահատարիներով Արշեղ արքայի թագավորության սկզբից մինչև Արտաշեսի թագավորությունը ընկած է ընդամենը 66-ամյա ժամանակաշրջան (Արշեղ՝ 20+ Արշավիր՝ 46 և ապա՝ Արտաշես) և, ինչպես տեսանք, արտահայտում է պապի ու թոռան ժամանակային հեռավորություն։ Ուրեմն Խորենացու խոսքը պարթևական տերության միևնույն ժամանակաշրջանին յուրահատուկ կարգի մասին է, և անհավանական չի լինի, եթե այս կարգը տեսնենք նաև Արշեղի ժամանակ։ Ավելին, երբ նկատի ենք առնում Արշեղին յուրահատուկ որոշ հանգամանքներ ևս, ոչ միայն հավանական է դառնում նրա թագավորությունը իր հոր՝ Արշանակի ժամանակ, այլև ենթադրվում է, որ Տիգրան II-ի հետ դաշինք կնքելիս նրա ձեռքին կլիներ պարթևական տերության գործնական ղեկավարությունը։ Այսպես՝ ա) ըստ Խորենացու, Արշանակին հաջորդել է Արշեղը (Բ, 68), ուրեմն նա պարթևական տերության գահաժառանգ է եղել։ բ) Խորենացու՝ մեր վերականգնած ժամանակագրությամբ Տիգրան II—Արշեղ դաշինքը կնքվել է 44 կամ 43 թ. (մ. թ. ա.), այսինքն Տիգրանի մահվանից (41 թ.) 2 կամ 3 տարի շուտ, իսկ Արշանակի մահվանից (44 թ.)՝ 3—4 տարի։ Պարզ ասած, Արշանակի կյանքի ամենավերջին տարիներին. գ) Սա մի ժամանակաշրջան էր, ինչպես հայտնի է և ինչպես երևում է

Խորենացու մոտ (Բ, 14—24), երբ պարթևական տերության արևմտյան սահմանները անընդհատ վտանգվում էին աշխարհատենչ Հռոմի կողմից, երբ զբաղվում էր անգամ այդ տերության լինել-չլինելու հարցը, և Պարթևների ուշադրության կենտրոնում իրենց արևմտյան սահմանների պահպանության ու դրանով իսկ հռոմեական վտանգը կանխելու գործն էր։

Այս փաստերը, որոնց հեղինակը նույնպես Խորենացին է, թվում է, բավարար հիմքեր են մտածելու, որ իր հոր՝ Արշանակի թագավորության վերջերին, թերևս քաղաքական ասպարեզում սրա անգործունյա լինելու պատճառով, պարթևական տերության գործերը (փաստորեն իր տերության) տնօրինել է թագաժառանգ Արշեղը։ Մինչև հոր մահը, հավանական է, Արշեղը եղել է այդ տերության տվյալ ժամանակի ամենակարևոր կուսակալության՝ Ասորեստանի թագավոր և իր բուն գահակալությունից, այսինքն՝ հոր մահվանից 3 կամ 4 տարի առաջ Տիգրան II-ի հետ դաշինք է կնքել և նրան օգնական զորք է տրամադրել ընդդեմ հռոմեացիների։ Ուրեմն, նշված անհամաձայնությունը, որին Գ. Սարգսյանը այնքան ծանրակշիռ գեր է հատկացրել, հենց իր՝ Խորենացու համապատասխան տեղեկություններով կորցնում է այդ գերը և, մեր կարծիքով, չի կարող հիմք ծառայել հավանական տեսակետից հրաժարվելու համար։ Այսինքն, չի կարող հիմք ծառայել, որ Ծ (50)-ամյա թագավորության փոխարեն Արշականի համար ընդունենք վրիպակային Լ (30) տարին և դրանով կասկածի տակ դնենք Խորենացու գիտելիքները՝ Հռոմի պատմության ու հռոմեական կայսրերի ժամանակագրության վերաբերյալ։

Վկայակոչված փաստերից զատ, մեր պաշտպանած առաջարկների հավանականությունը հաստատող ապացույց է նաև այն, որ դրանցով կազմված ժամանակագրությունը ծայրե ի ծայր, իր բոլոր մանրամասնություններով համահնչյուն է Խորենացու աշխատության երկրորդ և երրորդ գրքերի ամբողջ շարադրանքին։ Ի դեպ, ճիշտ չի վարվել Գ. Սարգսյանը, երբ մեր կազմած ժամանակագրության ու Խորենացու շարադրանքի հարյուրավոր համաձայնությունները անտեսելով հենվել է սոսկ Տիգրան Բ—Արշեղ, ինչպես տեսանք, թվացող անհամաձայնության վրա և փորձել է հակառակ տպավորություն ստեղծել։

Գ. Սարգսյանի հոդվածում կան նաև առարկելի այլ հարցեր՝ մտքեր, դատողություններ (ինչպես, օրինակ, նրա կարծիքը սելևկյան ժամանակագրության մասին՝ որպես ժամանակի պատմական իրականության մայրուղի. Խորենացու աշխատության մեջ ժամանակագրական մի քանի համակարգերի գոյությունը օրինականացնելու միտումը, Խորենացու ժամանակագրության մինչև մ. թ. 1 թ. ընկած ժամանակահատվածում ուսումնասիրողի աղատության մասին, նրա և մեր կազմած ժամանակագրություններում իբրև թե նկատվող նույնությունը՝ Քրիստոսից հետո ընկած հատվածներում և այլն), որոնք, սակայն, սոսկ տպավորություն ստեղծող հայտարարություններ են, և այս հոդվածում չարժե դրանց վերլուծությամբ զբաղվել։ Իհարկե, ոչ այն պատճառով, որ դրանք ուշադրության արժանի հարցեր չեն։ Ամենևին. պարզապես այն պատճառով, որ Խորենացու ժամանակագրության ճիշտ կամ սխալ վերականգնումը պայմանավորված է ոչ թե դրանցով, այլ շարադրանքի ընթացքում քննարկված հարցերով, որոնք ավելի քան արժանի են լուրջ ուշադրության։

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ХРОНОЛОГИИ У МОВСЕСА ХОРЕНАЦИ

Л. П. ШАГИНЯН

(Резюме)

В статье подвергаются критике положения Г. Х. Саркисяна, касающиеся хронологической системы «Истории» Хоренаци. На основе анализа фактов автор показывает, что: 1) исходной точкой хронологии Хоренаци служит не начальный год селевкидской эры (312/311 гг. до н. э.), а год смерти Александра Македонского (323 г. до н. э.); 2) подлинные данные Хоренаци о годах царствования первых двух парфянских правителей сохранились не в рукописях самого Хоренаци, а у автора X—XI вв. Асогика; 3) для четвертого парфянского правителя Аршакана вместо указанного у Хоренаци тридцатилетнего периода царствования следует признать—исходя из анализа многочисленных данных текста Хоренаци—пятидесятилетний период; 4) в списках армянских Аршакидов отрезок времени после смерти Тиграна II и до царствования Аршама, когда правил сын Тиграна Артавазд, соответствует, по-видимому, двадцати годам, хотя время это почему-то не указывается в дошедших до нас рукописях Хоренаци.